

Խմբագրական

ՎԱՄՆ ՀԱԻԱՏՈՅ, ՎԱՄՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ



Հայոց պատմութեան փոթորկայոյց էջերուն մէջ, Վարդանանց սխրանքը զգեցեր է խորհրդանշական բնոյթ, դարձեր է ոգեղէնութեան ակունք, հայրենասիրութեան եւ հայրենապաշտպանութեան ներշնչող դաս գալիք սերունդներուն համար...Եւ սա՛ որքան ալ գիտութեան եւ դիւանագիտութեան տրամաբանութիւնը փորձէ ապացուցել հակառակը, ա՛յն թէ ճշմարտացի էր Վասակի բռնած ուղին, թէ կարելի էր դիւանագիտօրէն լուծել հարցերը..., առանց անսալու մասնաւորաբար ժողովուրդի համախումբ ըմբոսութեան ոգիին, միասնական պայքարի կամքին, հաւաքական ժայթքումի հրայրքին, որոնց կրողն էին հաւասարապէս՝ հոգեւորականն ու աշխարհականը, ազնուականն ու բանուորը, երիտասարդն ու ծերը, տղամարդն ու կինը, մէկ զօրաւոր բռունցք դարձած...: Միասնականութիւն՝ զոր իր գիրքի առանցքը դարձուցած է Վարդանանց գլխաւոր պատմիչը՝ Եղիշէն:

Վարդանանց պատերազմը, կամ Աւարայրը ազգային-ազատագրական պատերազմ էր յանուն հայ ազգային ինքնութեան, յանուն հայ հոգեւոր արժեհամակարգի պահպանման, արժեհամակարգ որ խտացած էր հայ ժողովուրդի որդեգրած եւ դաւանած քրիստոնէութեան արժեհամակարգի մէջ, որ դարձեր էր անոր էութեան եւ ինքնութեան անքակտելի մաս, միս ու արիւն..... ազգային ինքնագիտակցութիւն, ինքնուրոյն աշխարհահայեացք եւ ապրելակերպ....

Վարդանանք եւ Աւարայրի ոգին մեզ ուղեկցեր են դար ու դարեր, պայմանաւորեր են մեր յետագայ յաղթանակները՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէի մէջ, յետ-Եղեռնեան մեր մաքառումներուն եւ ոգորումներուն մէջ, Արցախեան ազատամարտի օրերուն...: Այդ ոգիի շարունակականութիւնը կայ հայոց բանակի հայկազուններուն մէջ, ինչպէս տեսանք Ապրիլեան քառօրեայ պատերազմի օրերուն, երբ անոնք քաջաբար, զէն ի ձեռին, սեփական կեանքի գնով պաշտպանեցին հայրենեաց սրբազան հողը...

Ամէն անգամ որ մեր ազգի համար ստեղծուեր են մահ ու կենաց օրհասական վիճակներ, մեր ժողովուրդը՝ մէկ բռունցք դարձած, պաշտպաներ է իր սրբազան հողն ու սրբութիւնները, ազատ, ինքնուրոյն, հոգեւոր-բարոյական բարձրագոյն արժեքներով ապրելու լինելութեան կերպը.... Վարդանանց օրինակով, անոնց ոգեկանութեան հրայրքի ժայթքումով...



Յաճախ Աւարայրի սիրագործութիւնը կը նսեմացուի, զայն կոչելով լոկ բարոյական յաղթանակ: Բայց պիտի նշենք որ Վարդան Մամիկոնեանի բանակը պահեց իր քաջարի ոգին եւ մարտունակութիւնը 30 տարի շարունակ եւ 484 թուականին՝ Վահան Մամիկոնեանի սպարապետութեան օրով, Պարսիկներու Վաղարշ թագաւորի ինդրանքով եւ շնորհիւ Վարդանանց եւ Վահանանց մղած պատերազմներուն, Նուարսակի մէջ կնքուեցաւ պայմանագիր, ուր ընդունուեցան հայերու երեք պահանջները.

Ա. Զրիստոնէութիւնը ճանաչում գտաւ որպէս Հայաստանի պաշտօնական կրօն:

Բ. Հայաստան երկրի կառավարումը դարձեալ յանձնուեցաւ հայ աւագանիին:

Գ. Հայաստանի մէջ, պետական պաշտօնեաներ նշանակուեցան միմիայն հայ տոհմիկ աւագանիէն:

Ինչպէ՞ս կարելի է Աւարայրով սկիզբ առած, յետագայ մարտերով շարունակուած եւ Նուարսակով հաստատագրուած յաղթանակը կոչել բարոյական յաղթանակ միայն: Սա որոշապէս ունի քաղաքական բովանդակութիւն, քանզի շնորհիւ հայ ժողովուրդի մղած պատերազմներուն՝ 451-484 թուականներուն, ան կրցաւ երաշխաւորել իր ֆիզիքական եւ հոգեւոր գոյութեան յաղթանակը....

«Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» անխախտ վճռակամութեամբ ոտքի ելած հայութիւնը կրցաւ վերջիվերջոյ ունենալ իր հաւատքի կամ հոգեւոր ինքնուրոյն արժեհամակարգի վրայ խարսխուած հայրենիքը, իր ազգային ներքին անկախութիւնը, առանց որուն չկայ ազգային պետականութիւն թէ որեւէ այլ ազգային վարչական միաւոր...

Իսկ հիմա՞.....:

Հաւատարի՞մ ենք մեր ժառանգած, դարձեալ դար փոխանցուած հոգեւոր արժեհամակարգին, թե՞ պիտի ընդունինք «քաղաքակրթական շուկայում մեզ վիճակուած փոքրիկ խանութպանի դերը», ինչպէս կը գրէ մեծ մտածող Կոստան Չարեան, իր՝ «Անցորդը եւ իր ճամբան» գիրքին մէջ..., եւ կ'աւելցնէ այնքան իմաստալից կերպով՝ «Հայ լինելը պահանջում է մեծ ճիգ, հոգեկան կեդրոնացում, զոհաբերութեան ոգի, խոր հաւատք եւ առաքելական մոլեռանդութիւն»:

Այսօր՝ իրաւամբ այ, մեզի «օղի, ջուրի, հացի նման» անհրաժեշտ է ունենալ վերանորոգ հոգեւոր արժեհամակարգ, վերանորոգ ազգային գաղափարախօսութիւն, վերանորոգ ազգային տեսլական, վերանորոգ «Վասն հաւատի, վասն հայրենեաց» գերագոյն եւ սրբազնագոյն նպատակ, որուն համար պիտի արժէր մեռնիլ, ի պահանջել հարկին....



Քաղաքակրթական սուր բախումներու ներկայ ճգնաժամային իրադրութեան մէջ, մենք պիտի վերադառնանք ազգային մեր խոր արմատներուն, մեր ինքնուրոյն հոգեւոր արժեհամակարգին, նոր աւիշ ու աւիւն ներարկենք անոր, քանզի՝ դարձեալ վկայակոչելով Կոստան Չարեանի մարգարեական եւ խորապէս փիլիսոփայական պատգամը՝

«Չայոց աշխարհը, արիւնի եւ մահի ողբերգական այդ երկիրը, այլեւս յոյ է բոլոր կարելիութիւններով: Արարատի աստուածաշնչական ոգին պատրաստ է ճառագայթելու նրա թաքնուած ստեղծագործական թափը, հսկայ սերմի նման պայթելու վրայ է, ու դարը մօտենում է, երբ վերջապէս հայ ժողովուրդը պիտի գտնէ ինքն իրեն: Լինի այն, ինչ որ է: Կատարի իր դերը, ասէ իր խօսքը»:

Սա չէ՞ նորօրեայ Աւարայրի ոգին թելադրած հրամայականը....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Հարցազրոյց

ԶԱԻԷՆ ԵԿԱԻԵԱՆԻ ԱՀԱԶԱՆԳԸ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ



Արեւմտահայերէնը արեւելահայերէնի դէմ: Այլ կը բաւէ: Չայախօսութեան մտահոգիչ Նահանջը մատնանշելով, հայերէն լեզուի մասնագետը կոչ կ'ուղղէ հայերէն լեզուի բոլոր ուսուցիչներուն վերջ դնելու երկու կողմերը բաժնող վէճերուն եւ մնայուն համագործակցութեան ձեռնարկելու Չայաստանի հետ:

– Չայաստանի եւ սփիւռքի մէջ վերջին կէս դարու քաղաքական եւ աշխարհաքաղաքական փոփոխութիւնները իրենց ժխտական ազդեցութիւնը ունեցան հայախօսութեան վրայ աշխարհի տարածքին, մանաւանդ հաւասարակշռութիւնը խախտեցին արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի միջեւ: Այս փոփոխութիւններու հետեւանքները ի՞նչ կացութիւն կը պարզեն:

– Վերջին 50 տարիներուն հայերու ժողովրդագրական ուղղութիւնը կ'երթայ Արեւելքէն դէպի Եւրոպա եւ Միացեալ Նահանգներ: Մեծ թիւով հայրենակիցներ քեցին իրենց երկրորդ հայրենիքները, ինչպէս՝ Սեւ Ծովը եզերող երկիրները, Յունաստանը, Կիպրոսը եւ Միջին Արեւելքը, ներառեալ Իրանը: Մեծ թիւով հայեր այս երկիրներէն գաղթեցին Արեւմուտք, պատճառ դառնալով այդ երկիրներուն մէջ հայերէնի ուսուցումը ապահովող հայկական դպրոցներու փակումին: Այս կացութեան վրայ աւելցաւ հայերու արտագաղթը Չայաստանէն, Խորհրդային Միութեան փլուզումէն ետք եւ անկախութեան տարիներուն:



1970-ական թուականներէն մինչեւ 1990 եւ 1990-էն մինչեւ այսօր մեծ թիւով հայեր որոնք կը խօսեին արեւելահայերէն՝ արտագաղթեցին, միշտ նոյն ուղղութեամբ՝ Եւրոպա եւ Նոր Աշխարհ: 1970-ական թուականներուն արտագաղթի զուգահեռ շարժում մը ծայր առաւ գլխաւորաբար դեպի Միացեալ Նահանգներ եւ Քանադա, 1975-ին ծայր առած Լիբանանի քաղաքացիական պատերազմի եւ 1979-ին տեղի ունեցած Իրանի յեղափոխութեան հետեւանքով: Եւ ի վերջոյ, մեր ժամանակներուն, 5 տարիէ ի վեր պատերազմի պատճառով հայեր կը գաղթեն Սուրիայէն, ինչպէս նաեւ Յորդանանէն, միշտ նոյն ուղղութեամբ, պատճառ դառնալով դպրոցներու փակումին եւ արեւմտահայերէնի ուսուցման դադրեցման:

– Թիւերով կրնա՞ք բացատրել:

– 1960-էն առաջ Սուրիոյ մէջ մենք ունէին 55 կրթական կեդրոններ (մանկապարտէզներ, նախակրթական եւ երկրորդական վարժարաններ եւայլն), եւ այս բոլորը ողբալիօրէն կրճատուեցան: Այսօր միայն երկու դպրոցներ կը գործեն Զալէայի մէջ, փոքր թիւով աշակերտներով: Մենք նոյնպէս կորսնցուցինք մանկավարժական ուսումնական կեդրոններ որ հիմնած էինք: Ես հիմնադիրներէն մէկն էի Զալէայի Զայագիտական Ուսմանց Զիմնարկին, Առաջնորդարանի եւ Զամազգայինի հովանաւորութեամբ: Ոչ մէկ այլ կեդրոն կրցաւ փոխարինել հայագիտական այս դասընթացքները Զալէայի եւ Պէյրութի մէջ: Մենք մեծ խնդիրներու առջեւ պիտի կանգնինք մօտիկ ապագային, որովհետեւ այլեւս պիտի չունենանք ուսուցիչներ որոնք կարողանան արեւմտահայերէն լեզուն փոխանցել մեր նոր սերունդներուն: Ընդհանուր առմամբ մենք արդէն կորսնցուցած ենք շուրջ 40 մասնագետներ:

Միւս կողմէ, մենք ունինք նկատառելի թիւով երիտասարդութիւն, որոնց ծնողները Զայաստան ներգաղթած ըլլալով եւ մօտ 40 տարի Զայաստանի մէջ ապրելով, կը խօսին արեւելահայերէն, հակառակ որ իրենց սկզբնական լեզուն արեւմտահայերէնն էր:

Մենք պարտաւոր ենք այս խնդիրներուն լուծում գտնել: Չենք կրնար պարտադրել արեւմտահայերէնը մէկու մը որ կը խօսի արեւելահայերէն, նոյնպէս հակառակը: Պէտք է մտածել նոր մօտեցումներու մասին եւ վերատեսութեան ենթարկել հայերէն լեզուի դասաւանդութեան կարելիութիւնները, որովհետեւ ինծի համար հայերէնը մէկ լեզու է երկու ճիւղերով: Մէկը՝ արեւմտահայերէնը կը խօսուէր նախկին Օսմանեան Կայսրութեան մէջ, որպէս ազգային լեզու, եւ որ տակաւին կը գործածուի աշխարհի չորս ծագերուն տարտղնուած սփիւռքահայերու կողմէ, եւ միւսը՝ արեւելահայերէնը պետական լեզու է շուրջ 100 տարիէ ի վեր:

– Ի՞նչ է տարբերութիւնը երկու ճիւղերուն:

– Տարբերութիւններու մեծ մասը կը ներկայացնեն ուղղագրութիւնը, հնչիւնաբանութիւնը, խոնարհումները, հոլովումները եւ բառապաշարը: Դժբախտաբար 1922-ին Խորհրդային Զայաստանը ստալինեան հրամանագրով որդեգրեց «բարեփոխումներ», որոնք տակնուվրայ ըրին հայերէն լեզուի մտրոպեան ուղղագրութիւնը: Բայց ան որ կը խօսի



արեւմտահայերէն, ինքնաբերաբար կը հասկնայ նաեւ արեւելահայերէնը, նոյնպէս հակառակը:

Անշուշտ Սփիւռքը գլխաւորաբար կազմուած է արեւմտահայերէն խօսող հայերով: Զետեւաբար պէտք է կարելի եղածին չափ պահպանել արեւմտահայերէնը որպէս գրական, հաղորդակցական եւ մտածումի լեզու: Բայց պէտք է մտածել նաեւ ապագայի մասին: Պէտք է նկատի ունենալ Սփիւռքի այն համայնքները որոնք կազմուած են արեւելահայերով, որոնց մէջ երիտասարդը պէտք է կարենայ սորվիլ արեւելահայերէնը: Շատ յաճախ աշակերտներու ծնողները չեն տիրապետեր հայերէնին որպէս մայրենի լեզուի: Իրենց համար հայերէն սորվիլը օտար լեզու մը սորվելու պէս բան մըն է: Նոյնպէս, Սփիւռքի մէջ ապրող արեւելահայ երիտասարդները պէտք է կարելիութիւնը ունենան հետեւելու արեւելահայերէն լեզուի դասընթացներու, որպէսզի կարենան գոնէ կարդալ Սփիւռքի մէջ տպուած թերթերը, որովհետեւ անոնք արեւմտահայերէն են եւ դասական ուղղագրութեամբ:

– Զայաստանէն վկայուած երիտասարդները չե՞ն կրնար արեւմտահայ ուսուցիչներու բացը գոցել:

– Չենք կրնար ժխտական կեցուածք որդեգրել այն անձերուն հանդէպ որոնք վկայուած են Երեւանի Պետական Զամալսարանի կամ Խաչատուր Աբովեանի անուան Պետական Մանկավարժական Զիմնարկի բանասիրական ճիւղէն, որովհետեւ անոնք իրենց ուսման ընթացքին սորված են արեւմտահայերէն: Մինչդեռ կարգ մը պարագաներու այդ վկայեալ երիտասարդները, որոնք պատրաստ են աշխատելու Սփիւռքի դպրոցներու մէջ, մանաւանդ Ֆրանսայի մէջ, կը տեսնենք որ կը մերժուին ուսուցչական պաշտօն ստանալ այն պատճառով որ իրենց ուսումը ստացած են արեւելահայերէնով: Սխալ պատրուակ, որովհետեւ Երեւանէն վկայուած բոլոր այդ երիտասարդները կը տիրապետեն նոյնպէս արեւմտահայերէնին: Պէտք չէ մոռնալ որ վերջին 50 տարիներուն Զայաստանի Զանրապետութիւնը (Խորհրդային եւ ապա անկախ) աւելի քան 1000 սփիւռքահայ ուսանողներու համալսարանական կրթաթոշակ տրամադրած է, որոնք իրենց ուսումը առած են արեւելահայերէնով եւ եղած են արեւմտահայերէնի շատ լաւ ուսուցիչներ: Լաւագոյն քերականագետները, մասնագետները, դասախօսներն ու ուսուցիչները որ ունինք այսօր՝ սփիւռքահայ երիտասարդներ են որոնք վկայուած են Զայաստանի ուսումնարաններէն եւ որոնք կը դասաւանդեն արեւմտահայերէն: Այս վկայեալ երիտասարդներուն ուսուցչական պաշտօն զլանալու պատճառաբանութիւնը անհիմն է: Անոնց հանդէպ պէտք չէ ունենալ բարոյյթ, չհասկնալու զգացում կամ արհամարհանք: Ընդհակառակը, Սփիւռքի այսօրուան ներկայացուցած պատկերը կը պարտինք անոնց, ինչպէս նաեւ արտագաղթող հայերուն որոնք մշակութային բարձր մակարդակ ունին: Այսօր Եւրոպայի, Միացեալ Նահանգներու, Քանադայի եւ Միջին Արեւելքի մէջ այս արտագաղթողները բերած են հայկական մշակոյթի եւ արուեստի իրենց գիտելիքները եւ զանոնք ի սպաս կը դնեն Սփիւռքի պահպանման գործին:

– Ուսուցիչներ պատրաստող Զայաստանը չի՞ կրնար կարելոր դեր խաղալ արեւմտահայերէնի զարգացման մէջ:

– Շուրջ 15 տարի առաջ Սփիւռքի մէջ սկսանք կազմակերպել հանդիպումներ արեւմտահայերէնի պահպանման եւ զարգացման համար: Բայց քաղաքական դէպքերը մեզմէ առաջ անցան: Լիբանանն ու Սուրիան այլեւս նպատակայարմար չըլլալով, ես կը



կարծեմ որ լաւագոյն տեղը Հայաստանն է: Եւ այս առումով Հայաստանը պէտք է ստանձնէ իր պատասխանատուութիւնը, որովհետեւ ունի արեւմտահայերէնի մասնագետներ, ինչպէս օրինակ՝ Սուրեն Դանիելեանը, որ ամէն ճիգ կը թափէ Խաչատուր Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանին մէջ արեւմտահայերէն ուսուցանելու համար Հայաստանի երկրորդական վարժարաններու ուսանողներուն:

Պէտք է իր աշխատանքը նկատի ունենալ երկար վազքի վրայ, որովհետեւ կարգ մը հակասութիւններ պէտք է յաղթահարուին: Այսօր Հայաստանի Սփիւռքի նախարարութիւնը կ'աշխատի պահպանել եւ տարածել արեւմտահայերէնը: Խորհրդային Հայաստանի ժամանակներէն Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէն մեծ գործ կատարած էր, հրատարակելով բազմաթիւ գրքեր Սփիւռքի դպրոցներուն համար: Այս կոմիտէն մեծապէս օգնած էր դպրոցներուն, անոնց ուղարկելով ուսուցիչներ, երաժշտական գործիչներ, նոթաներ, խաղալիքներ եւայլն: Պէտք է վերակենդանացնենք համագործակցութեան այս քաղաքականութիւնը Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ: Սակայն Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը երբեմն հակասութեան մէջ է Սփիւռքի նախարարութեան աշխատանքներուն հետ: Կրթութեան նախարարութիւնը չէ համոզուած արեւմտահայերէնի դասաւանդման նպատակայարմարութեան: Այս շատ ժխտական տրամադրութեան դիմաց պէտք է ըստ այնմ ճշդէնք մեր քայլերը եւ որոշէնք թէ ճիշդ ի՞նչ կ'ուզենք: Պէտք է արեւմտահայերէնի ուսուցման նոր ռազմավարութիւն մը զարգացնենք:

– Ի՞նչ կ'առաջարկէք այս ուղղութեամբ:

– Ես կ'առաջարկեմ որ ստեղծենք իրաւասու մարմին մը որ համախմբէ երկու կողմերէն մասնագետներ, Հայաստանէն՝ Երեւանի Պետական Համալսարանի գրականութեան ճիւղի, Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի, Գրականութեան Հիմնարկի (ուր կը գտնուի արեւմտահայերէնի գլխաւոր ամպիոնը), Գիտութեան Ակադեմիայի Հրապետական Աճառեանի անուան հայերէն լեզուի հիմնարկի եւ կրթութեան նախարարութեան կողմէ մասնագետներ, Սփիւռքէն որպէս ներկայացուցիչներ՝ պէտք է ստեղծել Արեւմտահայերէնի Պաշտպանութեան Կոմիտէ, հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի:

Պէտք է գիտակցինք թէ ինչ է որ կը կորսնցնենք: Տակաւին մինչեւ քանի մը տարի առաջ Համազգայինի կրթական պիւտճէն կը հասներ 10 միլիոն տոլարի եւ այս գումարի մեծ մասը կը յատկացուէր Միջին Արեւելքի: Շուրջ 20 տարի առաջ Համազգայինի, Բերիոյ Թեմի (Աթոռանիստը՝ Հալէպ) Առաջնորդ Սուրեն Արք. Զաթարոյեանի եւ Կիւլպէնկեան Հիմնարկութեան (որուն հայկական բաժնի տնօրէնն էի) միացեալ նախաձեռնութեամբ ստեղծեցինք Հայագիտական Հիմնարկը, ուր կը պատրաստէինք ուսուցիչներ, մանկավարժներ, լրագրողներ եւ հայկական միութիւններու եւ հաստատութիւններու համար քարտուղարներ: Ուսման մակարդակը ինչպէս Պէրյուրի նոյնպէս Հալէպի մէջ կը համապատասխանէր Երեւանի Պետական Համալսարանի երրորդ տարուան: Ամէն տարի ունէինք մօտ 25 շրջանաւարտներ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, այսինքն՝ տարեկան 50 վկայեալներ: Այս է որ մենք կորսնցուցինք: Հալէպի մէջ 5 տարի առաջ 4 քառակուսի քիլոմետրի մէջ մենք ունէինք 12 կրթական հաստատութիւններ 12-15 հազար աշակերտներով, մանկապարտեզէն մինչեւ պաքալորէա:



– Այսինքն այսօր վտանգի տակ է մեր մարդուժի կարողականութիւնը...

– Այո, բայց դժուարութիւնները բազմատեսակ են: Սուրիոյ եւ Լիբանանի դէպքերու հետեւանքով աշակերտներու ծնողները հետզհետեւ աւելի հակում ունին իրենց զաւակները դրկելու օտար դպրոց, յատկապէս անգլիախօս թեքումով: Որովհետեւ իրենց ծրագիրն է գաղթել դէպի Միացեալ Նահանգներ կամ Բանաստա: Այսօր եթէ Լիբանանի դպրոցները ընդունելի վիճակ կը պարզեն շուրջ 8000 աշակերտներով, ասիկա կը պարտինք գաղթական սուրիահայերուն: Չաւակները օտար դպրոց դրկելը ազգային ինքնասպանութիւն է: 2016-ի երկրորդ եռամսեակին 28.000 սուրիահայեր գաղթեցին Բանաստա: Նոյնիսկ արեւելահայերէնը վտանգի տակ է, Հայաստանէն մեր հայրենակիցներու զանգուածային արտագաղթին պատճառով: Մենք բաւարար դպրոցներ չունինք Ռուսաստանի եւ Եւրոպայի մէջ:

Այս իմաստով է որ կ'ըսեմ որ ամբողջութեամբ պետք է վերակազմակերպենք արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի ուսուցման ռազմավարութիւնը:

– Եզրակացնելով կ'ուզեք ըսել, որ զուտ լեզուական տեսակետէ վերլուծելով, երկու կողմերու իրար դէմ պայքարը ժամանակավրէպ է:

– Մենք այսօր անձնակազմի ինդիո ունինք, հետեւաբար չենք կրնար մերժողական քաղաքականութիւն ունենալ մեկուն կամ միւսին հանդէպ: Եւ յատկապէս ինչ կը վերաբերի Ֆրանսայի հայ մանուկներուն, որոնց ծնողները արդէն իսկ հայերէն չեն խօսիր: Այնքան կարելոր չէ թէ անոնք կը սորվին արեւելահայերէն կամ արեւմտահայերէն, կարելորդ այն է որ անոնք հայերէն գիտնան: Մեր նպատակն է հայերէն սորվիլ, ո՛ր ճիւղը որ ըլլայ: Պետք չէ երեխայի մը հայերէն սորվելու կարելիութեան առջեւ պատնէշ դնել, ինչպէս որ պատահեցան դէպքեր, պատճառաբանելով որ ան մէկ կամ միւս տարբերակով կը խօսի: Մեր մարդուժի աշխարհատարած ցրումով եւ Միջին Արեւելքի մեր կարելիութիւններու կորուստով հայերէնի ուսուցումը այսօր ծայրայեղօրէն տկարացած ըլլալով, պետք է բացառել ամէն հակառակութիւն արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի միջեւ, որովհետեւ ատիկա շատ վնասակար, հակազգային, հակահայրենասիրական եւ ոճրային երեւոյթ է:

– Մտաւորականները ի՞նչ դեր կրնան խաղալ այս ուղղութեամբ:

– Հայաստանի եւ Սփիւռքի մտաւորականները պետք է քաջալերեն այս շարժումը, նախապատուութիւնը տալով հայերէնի ուսուցման, արեւելահայերէն թէ արեւմտահայերէն: Դժբախտաբար անոնցմէ ոմանք կարծեք կը զուարճանան զատողութիւն ընելով, երեւոյթ մը՝ որուն դէմ պետք է պայքարիլ:

Հարցազրոյցը վարեց՝ Վարուժան Մարտիրոսեան

Հայերէնի վերածեց՝ Գրիգոր Դաւիթեան

Գրական-Մշակութային

ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ՄԻՐԳԵՐՍ ԱՇՆԱՆ

Կը փայփայեմ ձե՛զ, միրգե՛րս աշնան

Դուք վաղ գարունես արեւ էք ըմպած

Չիւթեր հաւաքած, պաղին տոկացած

Խոհի եւ յոյզի գանձ էք կուտակած....

Դուք՝ տարիներուս խտացած ոսկի՛ն,

Ձեզ կը մատուցեմ իմ ընթերցողին

Գուցէ գտնէ ան ձեր Էջերուն մէջ

Իր քիմքը օծող բառեր սիրաջերմ....

Գուցէ ըլլաք դուք իր սիրտին սփոփանք

Բուժիչ սպեղանի վերքերուն սիրտի

Չէք մոլորեալին նոր յոյս ու լոյս տաք

Ըլլաք նոր գրգիռ, սիրոյ նոր թրթիռ....

Գուցէ սակայն դուք մէկդի շարտուիք

Ոչ մէկ ընթերցող հակի ձեր վրայ

Ճաշակէ համը գոր սնուցեցի

Շունչ ու հեւքովս, սիրովս կա՛թ-կա՛թ....

Ի՛նչ ալ ըլլայ, ՏԷ՛ր, սիրով կ'ընծայեմ



Յունձքն այս բարի, բերքն իմ աշևան

Բայց երանի թէ ան ունենայ գէթ

Մէկ ընթերցող որ բարի օրինէ գայն...Ե.Գ.

.....

Ի՞նչ նժարով կրնամ չափել

Բառս, տողս ձեզ մատուցած

Խոհ, յոյզերով ծանրաբե՞ռն է

Թե՞ տաղտկայի գիր է ու տաղ...

Յանելո՞ւկ է չհասկցուած

Թե՞ բառերու կուտակում է

Պարապ վախտի խաղալի՞ք է

Թե՞ ցօղուն է հասկակալած...

Ի՞նչ իմանամ...գիտեմ միայն

Որ իմ գործն է...ներքին հրահանգ

Որ կը մղէ գրել, գրել

Նոյնիսկ եթէ գիրս անպետք է...Ե.Գ.

.....

Լոյս օրերես աշխարհն կարծես

Յանկարծօրէն փլատակ եղաւ...

Մէր, ջերմութիւն, գուրթ, գորովանք

Անյայտացան ասուպի պէս...

Յիմա քամին կը սուլէ սուր

Սիրտիս մէջ եւ ամէնուր

Կը յուշէ ինձ որ ձմեռ է

Ինչ որ ունիմ ես հաւաքեմ

Թէ չէ կ'առնէ ու կը քշէ

Անսրտօրէն կ'անհետացնէ...

Իր ի՞նչ մեղքն է թէ խեղճ սիրտս



Պիտ' հառաչէ դառնակսկիծ

Իր ցաւէն խոր գուցէ կանգնի

Չարկն անոր յաւետ դադրի..Ե.Գ.

.....

Կեանքէս համակ լուսատրոփ սիրտս մնաց

Որ դեռ թրթռայ լուսաթրթիռ եւ լուսաբաղձ

Որ դեռ զգայ գոլն արեւին, սեր կարօտին

Որ դեռ պոռթկայ անհրաւին, անարդարին...

Որ դեռ խայտայ լուսաճաճանչ արարումով

Դեռ կը հեւայ գեղեցկութեան լոյս պահերով

Դեռ կը յուզուի ծով բարութեան ալիքներով

Կ'ուրախանայ պզտիկ, փոքրիկ փուճ բաներով...

Դեռ կը սիրէ մարդ Էակը, տիեզերքն համակ

Կը գուրգուրայ մէն մի ծաղկին լուսափթիթ

Լուռ կը ցաւի անօգ մանկան արտասուքին

Արցունք ունի կորուստներուն հազարացաւ...

Կը հառաչէ սիրտին խորէն ու ողբաձայն

Ամէն անգամ որ մարդն մարդուն քարսիրտ դառնայ

Անխիղճ, անզգամ եւ խժռէ զայն անզթաբար

Մոռնալով որ նոյն կաւէն Է արարուած...

Դեռ բռնկի, սիրոյ կայծեր փայլատակէ

Բոցավառի ու ճենճերի, հուրհրատէ

Լոյս արարէ այրումովն իր սիրակէզ

Լուսաշառայլ, լուսածորան տողեր հիւսէ...

Յամայնատենչ սիրով մ'անյագ, կարօտագին

Լուսավարար խինդով, տենդով մը լուսածին

Կ'ուզէ զրկել աշխարհն համակ գորովագին

Եւ համբուրել երկինք, երկիր, ծառ ու ծաղիկ



Լուսարբեցումն՝ կեանքիս խորհուրդը ցնծագին...Ե.Գ.

.....

Տէ՛ր օգնէ որ գտնեմ տողս դեռ չգրուած,
Բա՛ն տուր միտքիս, հե՛ւք տուր սիրտիս տառապակո՛ծ,
Աչքերուս՝ լոյս, որ տեսնեմ դեռ չտեսնուածն,
Իմաստութի՛ւնդ կաթեցուր անձիս տանջակո՛ծ....
Չամակ կեանք մը քեզ եմ փնտռեր, ճշմարտութի՛ւն
Խաբկանքներուն մէջ բազմազան, ստապատիր,
Մերթ երեւցեր ես յստակ ու ջինջ, ո՛վ Մեծութիւն,
Մերթ ալ ամպեր քեզ սքօղեր են թաքնաթաքուր....
Ես խուզարկուն եմ անվիատ լոյս-ակունքիդ,
Ճամբորդն անկանգ որ չի ճանչնար տկարութիւն,
Գոնէ աչքերս դեռ չփակած այս աշխարհին
Չասու ըլլամ, ո՛վ Տէր, Լոյսիդ, գերթ օրհնութիւն: Ե.Գ.

.....

Միտքեր հեւիհեւ
Միգամածային
Անդուլ փոթորկին
Ներաշխարհիս մէջ....
Բառերս տկար
Կ'ուզեն յստակել
Միգամածն այդ
Մարմին ու ձեւ տալ
Անոր տենդահար....
Բառերը կրնա՛ն
Կաղապար հագցնել
Ճանաչողութեան



Դնել սահմաններ

Անպարագրկեալ

Բարդ իմացութեան....

Տիեզերքն անսահման

Կ'ալեկոծուի յար

Իմ մէջ ափէ-ափ

Մինչ բառեր տկար

Կը դնեն սահման

Անսահմանափակ

Իմ ողջ էութեան....

Կ'ուզեմ յանձնուիլ

Իսօլ տարերքին

Կեանքի, տիեզերքի

Անբառ խորապրիլ

Իրերն ու մարդիկ

Աշխարհն լայնածիր

Տիեզերքն անծիր....

Բայց միտքս դարձեալ

Կը փնտռէ բառեր

Բանտել կ'ուզէ դեռ

Թռիչքն անվեհեր

Ճախրանքն ազատ

Սահմաններուն մէջ

Բառ-կաղապարին....

Եւ կը մնամ առկախ

Ես-իս տիեզերքին

Որ մերժէ սահման

Ու պարագրկեալ



Տարագաւորեալ

Յունիս մէջ բառին....Ե.Գ.

.....

Կեանքս գիրքի էջեր որպէս

Բացի ի տես ես ամէնքին

Էջերուն մէջ հոգիս ցոլաց

Սիրտս բորբ իր երգը երգեց...

Էջերուն մէջ մերթ վառ գոյներ

Ճառագեցին իրենց փայլով

Մերթ ալ գոյներ գորշ, մթամած

Թախիծ բերին իրենց ստուերով...

Այնտեղ միշտ ալ երագս կար

Որ կը թեւեր, նոր յոյս կու տար

Ծիածանի պէս եօթներանգ

Կը կամարեր կեանքս համակ...

Առեղծուած մը սակայն մնաց

Էջերուն մէջ յար թաքնուած

Որպէս խորին խորհուրդ վսեմ

Չոր շատ քիչեր կարդալ գիտցան...Ե.Գ.

.....

Յոգիս դեռ գիտէ երագներ հիւսել

Յին հին օրերու տենչերով պայծառ

Տարիներն երբեք փոշի չեն դիգեր

Անոր պսպղուն փայլին լուսավառ...

Յոգիս դեռ գիտէ լիասիրտ հիանալ

Երբ հորիզոնին արեւածագն է

Լուսահեղեղ ու վարդաբուրեան

Թէ մայրամուտն է գոյներով հուրհրան



Բռնկուն բոցովն թախծին բաժանման...

Յոգիս դեռ գիտէ կեանքով արբենալ

Բերկրանքն զգալ ծառին ու ծաղկին

Արեւալոյսին այն մշտաժպիտ

Որ կը պարուրէ աշխարհը համակ....

Յոգիս դեռ գիտէ ընդգրկել համայնն

Կտրել ու անցնիլ միջոց, ժամանակ

Անցեալն ու ներկան կամարել իրար

Անդրանցել խուրթեր, պատնէշ ու պատուար

Յասնիլ ամէն տեղ, ուր ան կամենայ....

Յոգիս երեւի որ պիտ' ապրի յար

Մարմնէս ալ ազատ պիտի թեւածէ

Տիեզերական շունչին մաս դառնայ

Յիւլէ մը անմահ համայնին անափ...Ե.Գ.

.....

Օրերուս հետ, օրերուս մէջ

Կեանք մը լման ես ապրեցայ

Ես այրեցայ ինքս իմ մէջ

Ինքս իմ մէջ կրակ դարձայ...

Յրկիզումն էր ինքնորոնման

Մայրերուն վրայ օտարոտի

Փնտռտուքն էր իմ ետեւան

Յնչիւններուն սիրտիս, միտքիս...

Ես փարեցայ լոյս տառերուդ

Այբուբենիդ աստուածատուր

Լուսաթրթիռ քու տաղերուդ

Ներդաշն էին անոնք հոգւոյս...

Յայրենի հող անոնք դարձան



Երկինքներուն տակ այս օտար

Սուրբ հոգեաց ու մանանա

Որով հոգիս միշտ արբեցաւ...

Լուսաթելեր տուաւ հայ գիրն

Որ թեւածեմ հայոց երկնին

Յոյս ու լոյսեր քաղեմ անվերջ

Սկիհիս մէջ պատարագի...

Խորանին վրայ հայ գիր ու տառի

Ես հաղորդուեցայ անոնց շունչին

Որ լիառատ բաշխեմ զանի


Որպէս յետին մշակ գիրի....Ե.Գ

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



Գրական-Մշակութային

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ



Ի՞նչ գեղեցիկ է, ինչքան ճկուն է պոլսահայերենը:

Թեթեւ է, վերասլաց, ջուրթակի սուր ձայների նման թրթռուն, գեղեցիկ կնոջ ոսկեթել հիւսուած շղարշ, որի վրայ լուսինը թիթեռնիկներ է բանտարկել: Ածականները թիավարուող նաւակների նման առաջ են սահում, մինչ բայերը գրեթէ անշարժ, գեղեցիկ ափից հեռացող տեսարաններ են դիտում:

Նախադասութիւնը նուազաւոր է եւ ներդաշնակ: Նապոլիտեան երգի նման նա շունչ է առնում շրթուքների ծայրին, ոլորում բերնի մէջ, պտղտում կոկորդի մօտ, շոյում առաստաղը եւ դուրս գալիս՝ ինչպէս թեթեւ հառաչանք:

Կերպրնկալ է եւ հոսուն:

Ռազմական ոչ մի շեշտ չկայ: Օրգանական ո՞չ մի միութիւն, ո՞չ լոյս, այլ լոյսի խաղ, ո՛չ ծով, այլ կոհակների ծփծփանք: Այստեղ բառը, ինչպէս արարատեան լեզուի մէջ, չի կառչում մտքին սուր ակռաներով, գաղափարի ուսերի տակ տնկուած փայտ չէ, այլ թեթեւօրէն թեւարկող նշան, բոցի վրայ սլացող անտեսանելի ծովի:

Կիլիկեան թագուհիների հագած վենետիկեան թեթեւ կերպասների նման բառերը մեղմօրէն սեղմում են ներդաշնակ մարմինը եւ երկար ծալքերով վայր ընկնում գետին: Խաղում են անցնող հովի շնչի տակ, փայլփլում ջահերի անհանգիստ բոցերում, շոյում պալատի զարդերը, ծփում Արեւմուտքից եկած ասպետների արծաթէ սաղաւարտների վրայ:

Պոլսահայ լեզուն քաղցր է: Նա պտուղ չէ. մրգերի բնական, հիւթեղ եւ անմիջական համը չունի: Երկարօրէն, բարակ ու նուրբ մատներով պատրաստուած անուշ է, որի համեմները հեռաւոր երկրներից են գալիս: Մատուցում են ոսկեզօծուած պնակների մէջ՝ փղոսկրէ դգայով, ու չգիտես՝ ուտե՞ս թէ նայես:

Բառը ինչում է, սիրուն ժպիտով կանգ առնում եւ լաւագոյն պարուհիների նման ոտքի մատների վրայ պտոյտ գալիս, նորից պտոյտ գալիս եւ բարեւում: Ածականների երամը աննշմար կերպով ներս է մտնում ու բեմի ներքնախորը՝ արուեստական գոյնզգոյն լոյսերի տակ, հագար ձեւեր առնում:

Ջուրթակները թաւշեայ ճպոտների տակ հառաչում են, մինչ սրինգները մելամուշ երգեր են երգում:

ԿՈՍԱՆ ՉԱՐԵԱՆ

«Անցորդը եւ իր ճամբան»



Գրական-Մշակութային

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՁՈՂՐԱՊԻ ԱՆԱԻԱՐՏ ՀԱՄԱՆՈՒԱԳՔ

Գրեց՝ ԱՐԱՄ ՄԵՓԵԹՃԵԱՆ



Արուեստագետներուն ծնունդն ու կեանքը կը վերարժեւորուին իրենց թողած իրագործումներով եւ անոնց գեղագիտական չափանիշերով: Իսկ՝ մահուան թուականներն անոնց, պարզօրէն՝ սկիզբն են ոգեղէն այն ճանապարհորդութեան, որու ընթացքին ենթական կը շարունակէ ապրիլ իր ստեղծագործական երկերով:

Արուեստագետ-գեղանկարիչ մըն էր Չոհրապ (Գրիգոր – Չոհրապ Բէշիշեան, ծնեալ Յալեպ՝ 1943), որուն ուսումնառութիւնը կ'անցնի տեղւոյն Մեսրոպեանէն ու ճեմարանէն: Նկարչական առաջին իրապարակային ցուցահանդէսը կը կազմակերպէ Մեսրոպեան վարժարանը՝ 1956-ին, որ կը հանդիսանայ մեկնակէտը արուեստագետի իր կեանքին: Արուեստասէր պատանին կը փափաքէր մեկնիլ Իտալիա՝ դասական նկարչութեան ծննդավայրը, սակայն՝ երբ իր « գործնապաշտ» հօրը ընդդիմութեան կը բախի ուղեւորութեան գաղափարն իսկ, պատանի Չոհրապ կը գոհանայ յոյն նկարիչ Սիրոսի հոգատարութեամբ: Առաջին երեք տարիներուն ան կը ծանօթանայ նկարչական արուեստի նախագիտելիքներուն: 1958-ին կը հաստատուի Պէյրուզ՝ մեծ երազներու հետապնդումով: Վեց տարի կ'աշակերտէ իտալացի նկարիչ Ճուլիանոյին: Երբ Գեղեցիկին կը միանայ հոգեպահուստի մտահոգութիւնը, կ'ընդունի ընթացք տալ նաեւ առեւտրական պահանջներու: Նոյն շրջանին, կը հետեւի Բասիլքի համալսարանի նկարչական բաժանմունքին:

1972 թուականին Պրիսթոլ պանդոկի սրահէն ներս սարքած իր Ա. ցուցահանդէսով, Չոհրապ նկարիչը նորայայտ անուն մըն է խոստմնալից, ուժական ու երիտասարդ: Յաջորդ տարին, ՌԱԿ-ի Մ. Փորթուկալեան ակումբի վարչութիւնը, երիտասարդ նկարիչին մէջ ողջունելով Լիբանանցին ու Յայը, կը կազմակերպէ ցուցահանդէս մը, որ կը խորհրդանշէր Ապրիլ 24-ի եւ Մայիս 6-ի նահատակաց գոյգ տօները: Ահաւասիկ, այդ տարիներէն սկիզբ կ'առնէ շարքը իր անհատական մօտ քառասնեակ մը ցուցահանդէսներուն, առաւել՝ շուրջ քսան հաւաքական ցուցահանդէսներու կը բերէ իր մասնակցութիւնը՝ մեկնելով Պէյրուզէն կ'այցելէ Յալեպ, Բուէյթ, Կիպրոս, Նիւ Եորք, Լոս Անճըլըս եւ Գանատա: 1975-ին, ան յատուկ իրաւերով՝ ուրբ ամիս կ'ըլլայ հիւրը Վենետիկի Միսիթարեան հայրերուն, ուր կը ստեղծագործէ առ ի մասնակցութիւն Միսիթար Աբբահօր ծննդեան 300-ամեակի հանդիսութեանց:

Այսպէս, շուրջ յիսնամեակ մը ամբողջ, ան մնայուն ներկայութիւն մը եղաւ լիբանանեան գեղանկարչական աշխարհէն ներս: Լիբանանեան տագնապի բոլոր տարիներուն, մնաց Լիբանան եւ իր ներդրումը բերաւ լիբանանեան նկարչական արուեստին: Աշխարհի զանազան քաղաքներու մէջ, հայ եւ օտար քսանէ աւելի մշակութային կեդրոններու եւ



թանգարաններու մէջ հանգրուանած են Չոհրապի իւրայատուկ ներաշխարհը արտացոլացնող մեծ ու փոքր չափի բազմաթիւ պաստառներ:

Չոհրապի նկարչութիւնը կը յատկանշուի իր գեղարուեստական մտածողութեամբ ու թելադրականութեամբ: Իւրայատուկ իր ոճին մաս կը կազմեն գոյներու եւ գիծերու հրավառութիւնը՝ իբրեւ համադրում իր ուրախ թէ տխուր հոգեվիճակին: Ընդհանրապէս, անոր գործերը կ'արտայայտեն դասականութենէն դէպի խորհրդապաշտութիւն ընթացող ուղեծիրը: Այս ներդաշնակութենէն ծնունդ կ'առնէ գոյութեան իմաստը իր նկարչութեան, որուն ազդեցութիւնը կը ներթափանցուի միևնույն ակնդիրին հոգիին խորը, մանաւանդ՝ երբ այդ պաստառները կը վիպերգէն կրօնաշունչ դիւցազներգութիւնը սրբանկարներու խորհուրդին: Արդարեւ, բազմաթիւ են իր ազգային-հոգեւոր արժէքներու հետամուտ իր նկարները: Աղբիւրը իր ներշնչումներուն: Պատիւը կ'երթայ Յայու տոհմիկ աւանդութիւնները մայրական կաթին հետ իրեն փոխանցած մօրը, որմէ ստացած ընտանեկան դաստիարակութիւնը զինք հաղորդակից կը դարձնէ կրօնականին հետ՝ նաեւ ազգային ներշնչումներուն: Իսկ, իր աշխարհական բովանդակութեամբ իրագործուած պաստառները հոգեվիճակներ են՝ հարուստ ներաշխարհի մը մտայղացումով:

Գեղանկարիչը, իր ստեղծագործութեան պահուն երբ կ'ընտրէ նիւթեղէնը (մատիտ-մելան-ջրաներկ կամ իւղաներկ), իր միտքին մէջ ունի մտածումը երկունքի մէջ եղող գործին տրուող կեանքին տեսողութիւնը: Անկասկած, իւղաներկը ամենէն աւելի երկարակեացն ըլլալու առաւելութիւնը ունի: Յետաքրքրական են սակայն, իր իւղանկարներուն հակադրուող չինական մելանով ստեղծած գծանկարները, որոնք կը գտնուին վերացապաշտ նկարչութեան ու դասական ըմբռնողութեան միջեւ: Պէտք է մօտէն, շատ մօտէն կարդալ գիծերու լեզուով գրուած մարդկային այս վիպերգները: Յարկ է, որ ակնդիրը փորձէ խորանալ ու տեսնել նկարիչին երկունքը, ու չառաջնորդի կաղապարուած գաղափարներու մերթ քմայքոտ ու մերթ անանուն պահանջներէն:

Ամփոփ. Գեղանկարչութիւնը մարդկային հոգիին ներքին հարստութիւնները խուզարկող, վերծանող ու բացայայտող արուեստն է:

Այս մտորումները ծնունդն են մեր քառասնամեայ բարեկամութեան ընթացքին կատարուած երկխօսութեան պահերուն: Յարկ է , որ զանոնք յիշենք ընդմիշտ, ու պահենք մեր մտերմութիւնը արուեստագետին գործերուն հետ:

Չոհրապի կեանքին ու գործին Յամանուազը մնաց անաւարտ:

Ան պիտի շարունակէ հնչել ու տեսել ընդմիշտ՝ իր հարազատներուն ու մտերիմներուն խոհերուն մէջ, իբրեւ դառնանոյշ ու պատկերազարդ պատմութիւն մը՝ սփիւռքահայ արուեստագետ մարդու:

Բարի յաւերժաերթ Չոհրապին:

Յօդուածներ

Սուրիոյ Միջազգային Տագնապը Եւ Սուրիահայութեան Հերոսական Պայքարը

ՏՈՔՏ. ԳՐԻԳՈՐ ԱՏԱՆԱԼԵԱՆ



Կար ժամանակ, երբ Սուրիան խաղաղութան, կայունութան ու ներքին անդորրութեան օրինակ կը ծառայէր Միջին Արեւելքի երկիրներուն, Սուրիոյ բարեկամ երկիրները կը հաստատէին այս իրականութիւնը, իսկ Սուրիոյ հետ հակադրութիւններու մէջ գտնուող երկիրները չէին ժխտեր:

Աւելի քան հինգ տարիներ առաջ «Արաբական գարուն» կոչուած շարժումը թակեց Սուրիոյ դռները, ալեկոծեց այս երկրի ներքին ապահով կեանքը, խախտեց ժողովուրդին անդորրը:

Պետք է ընդգծել համաշխարհային հանրային կարծիքին ներկայացուող, որպէս ժողովրդավարութեան, արդարութեան ու խօսքի ազատութեան ձգտող շարժումը՝ «Արաբական գարունը» իսկութեան մէջ երբեք արաբ զանգուածի ինքնաբոլիս՝ տարերային, ժողովրդային ապստամբութիւնը չէ, այլ արաբական աշխարհի կարգ մը երկիրներու վարչակարգերը փոխելու՝ տապալելու միջոց, արտաքին ուժերու միջամտութեամբ, որոնք հմտօրէն օգտագործեցին արաբ զանգուածներու անվստահութիւնը իրենց սեփական իշխանութիւններուն նկատմամբ:

Այլապէս ժողովրդային ապստամբութեան աւելի խորին պատճառներ գոյութիւն ունին Արաբական Ծոցի մենատիրական երկիրներու մէջ, քան Թունուզի, Եգիպտոսի, Լիպիոյ եւ Սուրիոյ մէջ: Ծոցի երկիրները մարդկային իրաւունքներու եւ խօսքի ազատութիւններու առումով կը գտնուին ամենաստորին աստիճանի վրայ. անոնք աւելի շատ ենթահողը ունին ժողովրդային ապստամբութեան:

Սուրիոյ մէջ ծայր առած դէպքերն ու անոնց զարգացումները մեր առջեւ կը պարզեն խճճուած, բազմաշերտ ու բազմահանգոյց հակամարտութեան մը գորշ պատկերը:

Առաջին շերտը՝ խօսքի, քաղաքական գործունէութեան, ազատութեան աւելի լայն իրաւունքներու պահանջն է, զոր կը պահանջէ սուրիացի քաղաքացին, այս արդար պահանջին ետին թաքնուեցան մարդասիրական շղարշով ծածկուած ուժեր, որոնք շատ հեռու կը գտնուին մարդկային իրաւունքներէ, խօսքի ազատութեան ըմբռնումներէ եւ համամարդկային այլ արժէքներէ, ինչպիսին Թուրքիան է, Զաթարը եւ Սեուտական Արաբիան:

Թուրքիան իսլամական իր վարչակարգով, Ծոցի երկիրներու հետ ձեռք-ձեռքի տուած ամէն նենգ միջոցի կը դիմէ, արաբական աշխարհին մէջ իշխանութենէ հեռացնելու աշխարհիկ եւ



ազգայնական գաղափարախօսութիւնը դաւանող ուժեր, զանոնք փոխարինելու «Արդարութիւն Ազատութիւն», «Արդարութեան Չարգացում» անուններուն տակ ծուարած իսլամական կրօնամոլ ուժերով: Եթէ եգիպտացի ժողովուրդը, համաժողովրդային յեղափոխութեամբ, «Իսլամ եղբայրներ»ը Եգիպտոսի իշխանութենէն չհեռացներ, ապա անկասկած որ գալիք տասնեակ տարիներու վրայ երկարող ժամանակաշրջան մը արաբական աշխարհի մեծ մասը թրքական եւ «Իսլամ եղբայրներ»ու քաղաքական ազդեցութեան տակ պիտի մնար:

Ոչ միայն եգիպտացի ժողովուրդը փրկուեցաւ իսլամիստ ուժերու տիրապետութենէն, այլեւ այդ յեղափոխութիւնը իր բարերար ազդեցութիւնը ունեցաւ Սուրիոյ քաղաքական իրադարձութիւններուն վրայ, աւելին՝ փրկեց Յորդանանը «Իսլամ եղբայրներ»ու տիրապետութենէն ու անկասկած իր դրոշմը թողեց Թունուզի քաղաքական վերիվայրումներուն վրայ:

Սուրիոյ քաղաքական դէպքերուն կարեւորագոյն օղակն է՝ Իրան, Իրաք, Սուրիա եւ Լիբանան հսկայական տարածաշրջանը, ռազմա-քաղաքական ու տնտեսական համագործակցութիւնը, տարածքային ռազմական նշանակութիւնը, նաֆթի ու գազի հարուստ պաշարները դէպի Եւրոպա ու Ասիա տանող ճանապարհը:

Սուրիոյ քաղաքական դէպքերուն ամենակարեւոր հանգոյցը Արեւմուտք-Ռուսիա մրցակցութիւնն է, որ ակնյայտօրէն Սուրիոյ իրադարձութիւններու զարգացումով նոր քաղաքական հարթակի տեղափոխուեցաւ, Սուրիոյ աշխարհաքաղաքական դիրքը, նաֆթի ու գազի հսկայական պաշարները պատեհ առիթը ստեղծեցին, որ Ռուսիա ինքնավստահ ու բարձրաձայն յայտարարէ միջազգային քաղաքական բեմ իր վերադարձին մասին, ոչ որպէս շարքային դերակատար, ինչպիսին էր դերը Իրաք եւ Լիպիա ներխուժումներուն ընթացքին, այլ որպէս հաւասարակշռող գերուժ, մանաւանդ անիկա իր կողքը ունի BRISC-ի երկիրները, երկրագունդի տնտեսական ու ռազմական հսկաները:

Ռուսիա խստագոյն անհանդուրժողականութիւն կը ցուցաբերէ արեւմտեան կարգ մը երկիրներու ոտնձգութիւններուն եւ հաստատակամօրէն վճռած է ՄԱԿի օրէնքները եւ միջազգային ապահովութիւնը վերահաստատելով վերջ տալ միաբեւեռ համակարգին:

Պետք է յիշել, որ տարիներ առաջ նորվեկիական նաֆթ ու գազ փնտռող-որոնող ընկերութիւն մը հետազոտութիւն կատարեց Սուրիոյ Միջերկրականի ծովափնեայ շրջանը շուրջ 5000 ք.մ. շերտաւոր նկարներով: Այդ հետազոտութեան արդիւնքները ցոյց տուին, որ Սուրիոյ Միջերկրականի ափը կը պարունակէ շատ մը նաֆթային հորեր եւ հսկայական գազի պաշարներ: Այդ նաֆթային հորերէն միայն երեքի նաֆթի պաշարները, Զուէյթի նաֆթային պաշարներէն աւելի են:

Հարց տանք՝ արդեօք արտօնելի՞ է Սուրիոյ նման երկիր մը նաֆթային ու գազային այսքան հարստութիւն ունենայ ու վայելէ Ռուսիոյ ու Իրաքի բարեկամութիւնը:

Սուրիան Զաթարի եւ Սեուտական Արաբիոյ պահանջքը մերժեց, երբ չհամաձայնեցաւ այդ երկիրներուն նաֆթն ու գազը Իրաքէն դէպի Սուրիա եւ ապա՝ Միջերկրականով փոխադրել դէպի Եւրոպա, որպէս ռուսական գազի այլընտրանք, Սուրիոյ համաձայնութեան պարագային Ռուսիան ե՛լ տնտեսապէս ե՛լ քաղաքականապէս դժուար կացութեան պիտի մատնուէր:



Ընդհակառակը, Սուրիան Ռուսիոյ հետ պայմանագիր կնքեց աուրիական նաֆթի ու գազի համատեղ շահարկման:

Պատահական չէ որ Սուրիոյ տագնապին մէջ ընդգրկուած են Թուրքիան, Ծոցի երկիրներն ու Երոպան, յատկապէս Ֆրանսան ու Անգլիան:

Որոշ քաղաքագետներ Սուրիոյ իրադարձութիւնը կ'անուանեն «Միջազգային խողովակներու պատերազմ»:

Սուրիոյ այս բազմաշերտ թնճուկէն հեռու չի կրնար մնալ Հայաստանի Հանրապետութիւնը: Հայաստանի առնչութիւնը բազմաթիւ է. առաջին հերթին Սուրիոյ մէջ պատմական ու ազգային մաշտաբով մեծ նշանակութիւն ունեցող հայկական գաղութի ներկայութիւնն է, բնականաբար սուրիահայութեան ճակատագիրը, անվտանգութիւնն ու ունեցած դժուարութիւնները պիտի մտահոգեն ինչպէս ամբողջ աշխարհի հայութիւնը, այնպէս ալ Հայաստանի պետութիւնը:

Նշենք, որ Հայաստանի անկախացումէն անմիջապէս ետք Սուրիա առաջին պետութիւններէն էր, որ ճանչցաւ Հայաստանի անկախութիւնը:

Անկախութեան առաջին ծանր օրերուն Սուրիան Հայաստան առաքեց անվճար նաֆթ եւ ցորեն, հակառակ Թուրքիոյ, Ատրպէյճանի եւ իսլամական կարգ մը երկիրներու ճնշումներուն:

Երկրաշարժի ծանր օրերուն Սուրիա առաջին երկիրներէն էր, որ օգնութիւն առաքեց Հայաստան: Սուրիոյ պետութիւնը Cargo օդանաւներ տրամադրեց, որպէսզի համայնքի հանգանակած ապրանքները տեղափոխուին Հայաստան՝ անվճար: Պատահական չէ, որ անկախ Հայաստանի առաջին նախագահի առաջին պաշտօնական այցը Սուրիա էր: Յետագայ նախագահներն ալ այցելեցին Սուրիա: Նախագահ Պաշտար Ասատն ալ իր կարգին մի քանի օրով պաշտօնական այցելութիւն տուաւ Հայաստան: Տակաւին 1980ական թուականներուն Հաֆեզ Ասատ՝ առաջին նախագահը արաբական աշխարհի, այցելեց Երեւան:

Սուրիա-հայ ժողովուրդ կապերը աւելի քան տասը դարերու պատմութիւն մը ունին: Պատահական չէր Սուրիոյ ժողովուրդը Մեծ Եղեռնի տարիներուն արաբական ասպնջականութեան ամենաբարձր արտայայտութիւններով գրկաբաց ընդունեց Եղեռնէն մազապուրծ մեր ժողովուրդի զաւակները, կիսեց իր հացը, հնարաւորութիւն ընձեռեց ամոքելու վերքերը, վերաճելու, կազմակերպուելու եւ բարգաւաճելու:

Սուրիոյ ազգային կառոյցները հայակերտումի եւ մարդակերտումի դարբնոցներ են, ուր կը դարբնուին ազգային առաքինի նկարագիրով, պահանջատէր ոգիով հայ երիտասարդները:

Սուրիահայ գաղութը տասնեակ տարիներէ ի վեր կը շարունակէ կենսատու աւիշ ներարկել Սփիւռքի զանազան գաղութներու ազգային կեանքին, մատակարարելով գրողներ, ուսուցիչներ, ազգային գործիչներ, արհեստաւորներ, որոնք հայկական անաղարտ ոգիով տոգորուած սերունդներ կը պատրաստեն: Ի զուր տեղ չէ որ այս գաղութը կոչած են «թթիմոր գաղութ»:



Հայաստանը Սուրիոյ իրադարձութիւններուն առնչուած է Իրանի միջոցով. վերջինս Սուրիոյ հարցի գլխաւոր դերակատարներէն է: Չմոռնանք, որ Հայաստանի շրջափակման ծանր տարիներուն Հայաստանի միակ արտաքին աշխարհի հետ կապը Մեդրիսն էր:

Հայաստանի ու հայութեան հանդէպ թշնամական վերաբերմունք ունեցող Թուրքիան նոյն վերաբերմունքը կը կիրարկէ Սուրիոյ ժողովուրդին հանդէպ, Թուրքիոյ համար մեծ հարց է սուրիահայութեան գոյութիւնն ու անոր պահանջատէր անկոտրում ոգին, հետեւաբար Սուրիոյ մէջ ապրող հայերը թիրախ են Թուրքիոյ համար: Յեղասպանութեան 100ամեակին նախորդող եւ յաջորդող ամիսներուն հալէպահայ գաղութի ազգային հաստատութիւնները թիրախ դարձան Թուրքիոյ հովանաւորութեամբ գործող ահաբեկիչներու կողմէ: Չմոռնանք Տէր Չօրի Նահատակաց յուշահամալիրի ռմբակոծումն ու քանդումը, Քեսապի ներխուժումը, թալանումը հայ տուններու թրքական բանակի անմիջական մասնակցութեամբ: Ինչ խօսք, այս բոլորը թրքական ուսումնասիրուած հակազդեցութիւնն են մեր պահանջատիրութեան:

Հայաստանի ռազմավարական դաշնակիցն ու տնտեսական ամենահզօր գործակիցը՝ Ռուսիան Սուրիոյ իրադարձութեան գլխաւոր դերակատարն է:

Տակաւին եթէ նկատի ունենանք «Հազարամեակի մարտահրաւերներ» ծրագիրէն ներս Հայաստանին նիւթական օժանդակութիւն ցուցաբերող Միացեալ Նահանգները, եւ անոր դերակատարութիւնը Սուրիոյ իրադարձութիւններուն մէջ:

Նաեւ յիշենք Հայաստանի կապը Եւրոպայի հետ, եւ յատկապէս Ֆրանսայի եւ անոր մասնակցութիւնը Սուրիոյ տագնապին:

Սուրիական իրադարձութիւններն ու այդ թնճուկի դերակատարներուն հետ Հայաստանի յարաբերութիւնները, այսօր քննարկման նիւթ են Հայաստանի քաղաքական վերնախաւին մօտ:

Հայակերտ ու հայաշունչ այս գաղութի պատմութեան արմատները կ'երկարին մինչեւ ԺՉ. դար: Որքան հարուստ, նոյնքան հրաշալի պատմութիւն մը կ'երտեր է այս գաղութը ԺՉ. դարէն սկսեալ ու աւանդած յաջորդող սերունդներուն:

Հալէպի հինաւուրց Սալիպէ թաղամասի Հայկազեան դպրոցը 1920 թուականէն առաջ կոչուած է Ներսէսեան, իր համար հիմնադրութեան թուական կ'ընդունի 1905ը:

Այսթուականը դաջուած է դպրոցի խորհրդանիշին վրայ: Աւելի քան հարիւրամեայ վարժարանի մը պատմութիւնն է:

Դարձեալ Սալիպէ հինաւուրց թաղամասի Ս. Քառասուն Մանկանց առաջնորդանիստ հնադարեան եկեղեցին իբրեւ կեդրոն ծառայելով մշակութային կրթական հոգեւոր հարուստ պատմութիւն մը ձեւաւորուած է:

Բերիոյ թեմի նշանաւոր առաջնորդ Արտաւազդ արք. Սիւրմէլեանը 1940ին. այսպէս գրած է իր «Պատմութիւն Հալէպի Հայոց» եռահատոր կոթողային աշխատասիրութեան նախաբանին մէջ. «...Քանի հինգայ Հալէպի մէջ, ու քանի անցայ անոր անշուք բայց խորապէս տպաւորիչ տաճարներու խաչքարերուն, զարդերուն, նկարներուն եւ տապանաքարերուն առջեւէն, այնքան սիրեցի անոր հին անցեալի պատմութիւնը...»:



Սրբազանը կը շարունակէ. «...Վեց տասնամեակներու վրայ երկարող եւ բնաւ չընդմիջուած հայ ազգային կեանք մը կերտուած է քաղաքի պարիսպներէն ներս, պետական ու միջազգային համայնքին կողմէ գնահատուած, բարգաւաճ ու երբեմն մեծապէս ճոխ կեանք մը...»

Հալէպի ճոխ կեանքը ընդհատուեցաւ Փետրուար 2012ին, Հալէպի առաջին խոշոր պայթումով:

Ռազմական գործողութիւնները Հալէպի բոլոր շրջանները տարածուելու պատճառով, հայ աշխատանոցները փակեցին արհեստանոցներու դռները, հայապատկան գործարաններն ու վաճառականներու պահեստանոցները թալանուեցան. աւելին, շատ մը գործարաններու տներըրը այսօր աղքատութեան եզրին կանգնած են:

Բացի տնտեսական անչափելի կորուստներէ, յատկապէս հալէպահայութիւնը զոհեց աւելի քան 150 նահատակներ, շուրջ 400 վիրաւորներ եւ հաշմանդամներ, ականատես եղաւ, վկան հանդիսացաւ իր ձեռքով ու ճիգով կառուցած ու բազում զոհողութիւններով պահպանուած դպրոցներու, եկեղեցիներու, մշակութային կեդրոններու, ծերանոցի քանդումին ու պղծումին:

Մեծ Եղեռնէն ետք սուրիահայութիւնը իր գոյութեան սպառնացող ամենամեծ վտանգը կ'ապրի: Սուրիահայութիւնը կ'ապրի ...յուզումնայի դէպքերով ու տառապանքով բայց ...մաքառումով լեցուն ժամանակաշրջան մը:

Սակայն, ահազանգող սպառնալիքներու եւ վտանգաւոր կացութիւններու մթնոլորտին մէջ, սուրիահայութիւնը ամրապնդեց համահայկական կեանքի հզօրութիւնն ու միասնականութեան ոգիով առաջնորդուող իր գոյերթը:

Այս հերոս գաղութը ապացուցեց, որ յանուն իր ֆիզիքական գոյութեան ու արժանապատուութեան պահպանման, կարողութիւնն ունի ամենածանր պատահարները դիմագրաւելու եւ վճռակամութիւնը՝ զանոնք յաղթահարելու:

Հալէպահայութիւնը, առօրեայ կենցաղային տագնապը արհամարհելով, պատերազմի Դամոկլէան սուրի սպառնալիքը անտեսելով, օրը ցերեկով մշակութային ու ազգային բնոյթի ձեռնարկներ կազմակերպեց, յոյս ու կորով պատգամեց շուրջ բոլորը: Սա խօսուն փաստ է այս գաղութի տոկոսնութեան, մարտունակութեան ու ապագային նկատմամբ լաւատեսութեան:

Անզուգական այս օրրանը, առինքնող այս գաղութը ի զօր տեղը չէ, որ ստացած է «Մայր գաղութ» տիտղոսը: Ազգային իր դիմագիծով առաքինի, աւանդապահ, հայկական բարքերուն եւ աւանդութիւններուն ամբօրէն կառչած տակաւին կը շարունակէ գործել դժնդակ պայմաններու ներքոյ:

Սուրիահայութեան դէպքերն ու կարիքները կը շարունակեն մնալ առաջնային ու առանցքային համահայկական իմաստով, պահի ու կարիքի անհրաժեշտութենէն մեկնած օժանդակութեան նոր, կազմակերպ հրատապ նախաձեռնութիւններու կարիքը կայ:



Սուրիահայրությունը երախտապարտութեամբ կը յիշատակէ հայրենի պետութեան, Սփիւռքի ազգային կառույցներուն եւ անհատ բարերարներուն, որոնք օժանդակութեան ձեռք մեկնեցին եւ բոլոր անոնց, որոնք կը շարունակեն իրենց օժանդակութիւնը:

Լուսարձակի տակ պէտք է առնուին այն աննախընթաց աշխատանքները, որոնք կատարուեցան մեծ նուիրումով ու հաւատքով SARF-ի կողմէ, որոնք օրինակ նաեւ խթան հանդիսացան այլ գաղութներուն համար: ՍԱՐՖ-ը Սուրիոյ տագնապի առաջին օրէն իսկ գործի լծուելով կրցաւ ակելի քան մէկ միլիոն տոլար հանգանակել ու առաքել Սուրիոյ գաղութին, բայց նաեւ անոր կազմակերպած բարձրորակ միջոցառումները սուրիահայ գաղութի տառապանքը վառ պահեցին մարդոց միտքերուն եւ սիրտերուն մէջ: Նոյնքան նշանակալի աշխատանք կատարեցին՝ ԶԲԸՄը՝ տրամադրելով ակելի քան մէկ միլիոն տոլար գաղութի կարիքներուն, ԶՕՄն ու Աւետարանչական ընկերակցութիւնը համասփիւռքեան մաշտաբներով միջոցառումներ կազմակերպեցին, նիւթական անչափելի գումարներ հանգանակեցին ու փոխանցեցին սուրիահայութեան: Տակաւին կրօնական, բարեսիրական այլ օժանդակութիւն առաքող կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու ցանկը երկար է, առանձին յօդուածաշարի արժանի:

Յատկապէս յիշեցինք ՍԱՐՖը, ԶԲԸՄը, ԶՕՄը եւ Աւետարանչական համայնքը. նշեալ կազմակերպութիւնները իրենց բարերար թելերն ու կազմակերպչական աշխատանքները կը շարունակեն Զայաստանի տարածքին ու Արցախի մէջ ապրող սուրիահայերուն համար, անոնց տրամադրելով կենցաղային, ուսումնական, բժշկական եւ այլ օժանդակութիւն, ի հարկէ գործակցաբար սփիւռքի նախարարութեան հետ:

Զայաստանի պետութեան գրկաբաց ընդունելութիւնն ու անվերապահ նեցուկը, հակառակ իր վտիտ կարելիութիւններուն, լուրջ ու անաչառ ուսումնասիրութեան ու բարձր գնահատանքի արժանի է:

Զամայն հայութիւնը կը վկայէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա. վեհափառ հայրապետին հայրական հոգատարութիւնը: Վեհափառը իր մտահոգութիւններուն կիզակետն ու առաջնահերթ խնդիրը համարեց սուրիահայութեան անհրաժեշտ օժանդակութեան առաքումը: Վեհափառը իր հայրապետական պատգամներով աշխարհի մօտ ու հեռու կրօնական ու քաղաքական կեդրոններուն մէջ բարձրաձայնեց Սուրիոյ տագնապը, շեշտեց Սուրիոյ ժողովուրդին եւ սուրիահայութեան տառապանքը, լուծման առաջարկներ ներկայացուց ՄԱԿի ներկայացուցիչին: Նիւթական հսկայական գումարներ առաքուեցան Անթիլիաս, որոնք ամբողջութեամբ տրամադրուեցան սուրիահայութեան բազում կարիքներուն, բայց նաեւ հոգեբարոյական բալասան հանդիսացաւ վեհափառի հայրապետական այցելութիւնը. սուրիահայութեան վիրաւոր ու տառապեալ կեանքին աւիշ ներարկեց, տոկայլու ու դժուարութիւնները դիմակալելու վճռակամութիւնը ամրապնդեց:

Զալեպահայութիւնը երախտապարտ է Զայաստանի Զանրապետութեան Զալեպի մէջ գործող միակ հիւպատոսարանի գլխաւոր հիւպատոս Տիգրան Գեորգեանին, լիազօր եւ արտակարգ դեսպան դոկտ. Արշակ Փոլատեանին՝ մատուցած ծառայութիւններուն համար: Անոնք իրենց կեանքը վտանգելու զինով յաճախակի այցելեցին Սուրիոյ հայաշատ քաղաքները, հայրենի պետութեան գործնական նեցուկը փոխանցելու:

Յաւօք սրտի, որոշ հայկական լրատուամիջոցներ, առանց խորաթափանցելու սուրիահայութեան եւ յատկապէս հալեպահայութեան տագնապի էութեան մէջ,



ապատեղեկատուութիւն տարածեցին, հալէպահայութեան տառապալի առօրեան շահագործելով փորձեցին գաղութի մօտ անվստահութիւն սերմանել իր ղեկավարներուն նկատմամբ եւ համայնքը ներկայացնել որպէս անկազմակերպ: Երբ մամուլին վրայ կ'երեւին կարծիքներ, որոնց կը պակսին փաստն ու քաղաքական լրջութիւնը, երբ իրականութեան չհամապատասխանող յայտարարութիւններ կը կատարուին կամ մեղադրանքներ կ'ուղղուին, այս բոլորը ոչ միայն չեն նպաստեր համահայկական միասնականութեան ամրապնդումին, այլ կը շեղեն հիմնահարցերը լուծելու ճանապարհէն: Սուրիահայութիւնը ունի իր ղեկավարութիւնը, որ հինգ տարիներու երկայնքին անմնացորդ նուիրումով ծառայեց, հսկայական փորձ կուտակեց եւ ան շատ ակտիւ տեղեակ է հալէպահայութեան կարիքներուն եւ ձգտումներուն: Եթէ տեղ մը բացթողում կայ, ան առաւել վճռական է ուղղելու. համայն հալէպահայութեան կը վնասենք, եթէ անհիմն ու իրականութեան չհամապատասխանող մեղադրանքներ կատարենք:

Այսօր սուրիահայ գաղութի վերականգնումը համազգային առումով առաջնահերթ մտահոգութիւն պէտք է դառնայ, այստեղ նկատի չունինք միայն ազգային կեանքն ու կառոյցներու վերականգնումը, այլ մասնագետներու, արհեստաւորներու եւ համալսարանաւարտներու արտագաղթը, որոնք երկրէն կը հեռանան ոչ միայն ֆիզիքական գոյութիւնը պահպանելու միտումով, այլեւ՝ աշխատանք որոնելու:

Կարելոր է նաեւ հաւաքաբար պայքար մղել այն յոռի բարքերուն եւ արատներուն դէմ, որոնք պատերազմի պատճառով մուտք գործեցին հայ կեանքէն ներս:

Վերականգնումի գործը այսօր նոյնքան եւ գուցէ ակտիւ առաջնահերթ է, քան Արցախի ճանապարհները:

Այս գաղութի ցաւի ու տառապանքի մեղմացումը, բայց նաեւ հոգեկան ու նիւթական վերականգնումը համահայկական հրամայական է, համահայկական պարտաւորութիւն է:

Կամքն է հալէպահայութեան եւ սուրիահայ նահատակներու, որոնք զոհուեցան «Վասն հայրենեաց, վասն հաւատքի»: Անոնք իրենց գարուն կեանքերը զոհաբերեցին Սուրիոյ եւ գաղութի ինքնապաշտպանութեան վսեմ գործին, մարտիրոսացան պահպանելու սուրիահայութեան դիմագիծն ու տոհմիկ անանդը:

Սուրիան պիտի յաղթահարէ պարտադրուած նենգ պատերազմը, փիւնիկի նման վեր պիտի բարձրանայ մոխիրներու տակէն եւ իր զաւակներուն բազուկներով պիտի կառուցէ նոր Սուրիան: Շրջանի երկիրներէն հայութեան մեծ մասը պիտի վերադառնայ Մայր գաղութ եւ ինչպէս պատմութեան ընթացքին, իր կարելոր ներդրումը պիտի տրամադրէ Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն:

Ես կը հաւատամ նոր ու բարգաւաճ Սուրիոյ ծնունդին, կը հաւատամ սուրիահայ ազգային կեանքի նոր վերելքին:

ՏՈՔԹ. ԳՐԻԳՈՐ ԱՏԱՆԱԼԵԱՆ. Բժշկական գիտութիւններու դոկտոր, հալէպահայ: Տոքթ. Գրիգոր Ատանալեանի սոյն յօդուածը քաղաքական համապարփակ վերլուծական տեղեկատուութիւն մըն է, վերջին տարիներուն Սուրիոյ պատերազմին հետեւանքով՝ սուրիահայութեան ի նպաստ տարուած աշխատանքներուն ու փոխանցուած



Նիւթաբարոյական օժանդակութեանց մասին զեկոյց: Յիշենք, որ տորթ. Ատանալեան մօտէն քայլ պահած եւ մեծ դեր ունեցած է ժողովրդային զանազան հանրահաւաքներու ընթացքին՝ փոխանցելու սուրիահայ գաղութի պատերազմական տագնապալի առօրեային մասին:

Յօդուածներ

Թուրքիոյ թաքուն եւ իսլամացած հայերուն մասին լռութեան եւ խտրականութեան դրուագներ

Աստղիկ Աբրահամեան



Մարտ ամսուան գիշեր մըն էր, երբ հանդիպեցայ Մքչիլ համալսարանին մէջ առեւտարական գիտութիւններ ուսանող կապուտաչեայ եւ թուխ երիտասարդի մը: Ան կը խօսեր կտրուկ, սակայն հասկնալի անգլերէն մը: Երբ իրեն հարցուցի, թէ ուրկէ՞ է, ան պարզապէս պատասխանեց. «Թուրքիայէն»: Անհանգստութիւն: Անհանգստութիւն մը, որ մեզի՝ հայ երիտասարդներուս, սորվեցուցին զգալ, երբ գտնուինք «անոնցմէ» մէկուն հետ դեմ առ դեմ: Հակառակ անոր կը շարունակեմ հետը խօսիլ: Երիտասարդը կը ժպտայ, երբ կ'իմանայ, որ հայ եմ: «Հայրս հայ է: Անունը Աւետիս է: Լաւ լուռ է այս, չէ՞»:

- Այո՛: Մա՛յրդ ուրեմն թուրք է:

- Այո՛, այդպէս է:

Զրոյցը կը շարունակուի, եւ շուտով կ'իմանամ, ինչպէս անոր մականունը՝ Էրզուրումօղլուն կը վկայէ, թէ անոր հայրը Էրզրումէն է, հայկական հին քաղաք մը, որ կը կոչուէր Կարին... եւ ուրկէ՞ հօրս մեծ հայրը փախուստ տուած է Յեղասպանութեան ընթացքին, հետագային ինքզինք գտնելով, չի յիշեր, թէ ինչպէ՞ս յայտնուած է Երեւանի մէկ որբանոցին մէջ: «Էրզուրումցի մըն ես, ինձի պէս», ըսի անոր:

Այդ օր, հայրենակից մը գտնելու այս պզտիկ ուրախութենէն աւելի խնդիրի մը ամկայութիւնը զգացի. անկարող եղայ հասկնալ, թէ այդ կէս հայ երիտասարդին հայրը ինչպէ՞ս թուրքի հետ ամուսնացեր է: Մինչ այդ, մեր հասկացողութեամբ, այդ ժողովուրդին մէկ ներկայացուցիչին հետ ամուսնանալը մեծագոյն մեղքն է, զոր հայ մը կրնայ գործել: Բայցեւայնպէս, Էրզուրումօղլու հայրը, ըստ երեւոյթին, իր կնոջ թուրք ըլլալը եւ ինքզինք առաջին հերթին թուրք նկատող զաւակ մը մեծցնելը հարց չէ նկատած: Ահա ասկէ կը բխեր անհանգստութիւնս. թէ հայերը Թուրքիոյ մէջ ոչ միայն գրեթէ ամբողջութեամբ ցուլուած են, այլ նոյնիսկ թուրքերու հետ կ'ամուսնանան:



Անցեալ դարու հայոց պատմութեան մէջ բացթողումներ գոյութիւն ունին: Հայոց պատմութիւնը ըսելով կը հասկնամ պատմականացումը 20-րդ դարու սկիզբին՝ ոչ միայն 1915-ի ցեղասպանութեան, այլ նաեւ համիտեան ջարդերուն, որոնք տեղի ունեցած են այդ սեւ թուականէն առաջ, եւ անոր յաջորդող դէպքերը: Ինդիր. շատ քիչ կը խօսինք անոնցմէ ետք Թուրքիոյ մէջ՝ հայկական պապենական հողերուն վրայ պատահածներուն մասին: Հայկական դպրոցներու մէջ չենք սորվիր Թուրքիոյ մէջ վերապրիլ յաջողած հայերուն վիճակին մասին: Կ'ենթադրենք, որ երբ այդ մասին չենք խօսիր, ուրեմն բնականաբար այլեւս հայեր չեն մնացած հոն: Մեր նորօրեայ պատմութիւնը կը կեդրոնանայ Պատմական Հայաստանի մէկ փոքր մասնիկին վրայ՝ մասնաւորաբար շուտով սովետական դարձած Անկախ Հայաստանի մէջ, քիչ մըն ալ արտասահմանի մէջ, սակայն միայն ցեղասպանութենէն յիսուն տարի ետք սկսուած: Այս երկու բեւեռներուն միջեւ, սովորաբար պատմուած, սփիւռքի հայկական վարժարաններուն մէջ դասաւանդուած պատմութիւնը թերի է, կարծէք պատմական յիշողութեան մէջ տարիներու ծանր լռութեան տակ թաղուած ցաւալի դէպքին հետ խզում մը տեղի ունեցած ըլլայ: Վերջերս, կարգ մը պատմաբաններ աշխատանք տարած են սրբագրելու այդ թերութիւնը եւ Թուրքիոյ հայերուն մասին բազմաթիւ երկեր եւ հրատարակութիւններ լոյս տեսած են: Սակայն տակաւին շատ աշխատանք կայ կատարելիք:

Ուստի Հայոց պատմութեան մէջ «Սուրի մնացորդներուն՝ Թուրքիոյ թաքնուած եւ իսլամացած հայերուն» մասին եղած բացթողումները պետք է ամբողջականանան: Լրագրող եւ ընկերաբան Լորանս Ռիթթըր, ընկերակցութեամբ լուսանկարիչ Մաքս Սվազլեանի, կը ձեռնարկէ փնտռել Թուրքիոյ հայերը, որոնք յաճախ իրենց իսկական ինքնութիւնը կը պահեն եւ փոխ անհասկացողութեան վախով լուռ կ'ապրին: «Թատէ» հրատակարչատան կողմէ հրատարակուած այս գիրքը լրագրական փաստագրում մըն է անոնց մասին, որոնք թուրքերու եւ քիւրտերու կողմէ կը կոչուին «սուրի մնացորդներ», եւ որոնք յաջողած են ցեղասպանութենէն վերապրիլ եւ շարունակել Թուրքիոյ մէջ ապրիլ: Հայոց արդի պատմութեան մէջ քիչ կը խօսուի կենդանի մնալու համար բռնի իսլամացած հայերուն մասին, ինչ ալ ըլլան պայմանները, կարծէք այդ անձերը այլ կրօնի մը պատկանելիութեամբ կը խանգարեն հայկական մշակոյթը: Տեղասպանութենէն անմիջապէս ետք վերապրողները՝ որբերը, քիւրտերու կողմէ կին առնուած երիտասարդ աղջիկները տասնամեակներ շարունակ լռութեան դատապարտուած են, յաճախ կը մերժեն իրենց զաւակներուն հայերէն սորվեցնել, վախնալով որ կ'երթան իրենց դրացիներուն կամ թուրք դասընկերներուն կը պատմեն:

Կրօնը Թուրքիոյ մէջ հայերուն առնչութեամբ կը ներկայանայ իբրեւ հիմնահարց, անկախ տարբեր եւ իւրայատուկ միջոցներով կը կիրարկուի: Չարմանալի չէ տեսնել տարբեր կրօններու հետեւող երկու եղբայրներ կամ երկու զարմիկներ՝ մէկը իսլամ, երբեմն ջերմեռանդ հաւատացեալ, միւսը առաջին առիթին իսկ քրիստոնեայ դարձած, ուրիշներ կը ներկայանան իբրեւ անհաւատներ, ոմանք նոյնիսկ ալեւի դարձած, ոմանք իրենց թրքական անցագրին մէջ «իսլամ» կարգավիճակ ունին, սակայն եկեղեցի կը յաճախեն, իսկ «քրիստոնեայ»ի կարգավիճակ ունեցող ուրիշներ սովորութենէ մղուած մզկիթ կ'երթան: Զրիստոնեայ հայ մը իսլամ հայուհի մը կ'առնէ իբրեւ կին, եւ հակառակը: Պատկերը ուրեմն յստակ ուղեգիծեր չունի: Սակայն Անատոլիոյ մէջ յաճախ այդ թաքնուած հայերը կը փորձեն իրենց «հայկականութիւն»ը պահպանել այլ հայերու հետ ամուսնանալով, պահպանելով արիւնակցութեան եօթը պորտի հեռաւորութեան կանոնը:



Թաքնուած հայերու իրավիճակը կը տարբերի ըստ շրջաններու, այդ մէկը ընդհանրապէս բացայայտօրէն ընդունուած է անոնց համայնքին կամ գիւղին կողմէ՝ արհամարհանքով եւ ատելութեամբ: Անոնց երկակի ինքնութիւնը յստակ չէ, սակայն կրօնը այս մարդոց համար արգելք չի հանդիսանար իրենք զիրենք հայ զգալու: Ասիկա բաւական խորթ կը թուի մասնաւորաբար Հայաստանի Հանրապետութեան մէջ մեր լսած խօսքերէն մեկնելով, ըստ որոնց հայը առաջին հերթին քրիստոնէայ է: Անատոլեան այս մեծ պատկերին մէջ գոյութիւն ունեցող տարբեր պատմութեան ընդմէջէն աւելի համաշխարհային ինքնութիւն մը ըմբռնելու հարցին դեմ յանդիման կը գտնենք մենք զմեզ, թէ հայը միայն քրիստոնէայ է: Եթէ այո՛ր, ապա 301-ին մեր ազգովին կրօնափոխ ըլլալէն առաջ հաւաքաբար ի՞նչ էինք:

Այս իսկական պատմութիւնները կարդալով կը նկատենք, որ հայերու բռնի իսլամացումը (կրօն մը, որ երբեմն կ'ընդունին իբրեւ իրենցը) չ'ազդեր անոնց «հայկականութեան» գիտակցութեան, եկեղեցիներու փլատակները պաշտպանելու, իրենց պատմութիւնը իրենց զաւակներուն փոխանցելու եւ այլ շրջաններու հայերուն աջակցելու փափաքին վրայ: Կարգ մը իսլամացած հայեր «Հայր մեր»-ը կ'ըսեն, կը խաչակնքեն սովորութենէ մղուած կամ որովհետեւ տեսած են մեծ մօր մը խաչակնքելը, եւ կը զգան, որ այդպիսով կը պատուեն այդ մեծ մայրը, անոր ապրած դժուար անցեալն ու իրենց մոռցուած հասարակաց պատմութիւնը: Կացութիւնը կը տարբերի Պոլիս ապրելու պարագային կամ գիւղական շրջան: Այն հայերը, որոնց հետ Ռիթըր հարցազրոյց ունեցած է, յաճախ կը գանգատին, որ պոլսահայերու կողմէ իբրեւ օտար կը դիտուին: Ըստ քաղաքի բնակիչներուն, այս հայերը իրենց կրօնքին ու լեզուին հետ որեւէ կապ չունին, ուստի ինչպէ՛ս կը յաւակնին հայ ըլլալ:

Ոմանց համար, սուրի մնացորդները յայտնութիւն մըն են, դժուար հասկնալի, խանգարող եւ երբեմն ծանրակշիռ: Ուրիշներու համար, այս մէկը առիթ կ'ընծայէ լրջօրէն խոկալու 21-րդ դարու հայկական ինքնութեան շուրջ. ինքնութիւն մը, որ ըստ երեւոյթին, յարափոփոխ է, ինքնութիւն մը, որ անշարժ չէ:

Հայոց ցեղասպանութեան ընթացքին տեսնուած եւ ապրուած բռնարարքներէն ետք, կը թուէր, թէ յիշողութիւնն ալ սպաննուած էր. չէինք ուզեր յիշել մեր եղբայրներուն, քոյրերուն, ծնողներուն եւ բարեկամներուն կորուստը, հայ ծնած ըլլալու իրողութիւնը կ'ուզէինք մտահան ընել: Բայցեւայնպէս, այդ նոյն յիշողութիւնը դանդաղօրէն, սակայն հաստատ կերպով կը յայտնուի: Մաքս Սվազլեանի ջերմ գոյներով եւ տպաւորիչ հակադրութիւններով լի լուսանկարներով զարդարուած այս գիրքը կարդալը ոչ միայն իւրաքանչիւր հայու համար պարտադիր պէտք է ըլլայ՝ աւելի լաւ հասկնալու համար իր սեփական մշակոյթի հսկայութիւնն ու բազմազանութիւնը, այլ նաեւ բոլորին համար՝ իբրեւ ընկերաբանական հետազօտութիւն, մշակոյթներու բախումի, փոքրամասնութիւններու կացութեան, լեզուի եւ կրօնի սահմաններու եւ մարդկային գոյութեան անորոշութիւններուն շուրջ ուսումնասիրութեան առարկայ:

(Այս յօդուածին ֆրանսերէն բնագիրը լոյս տեսած է «Հորիզոն»ի 2016 թուականի բացառիկ թիւին մէջ)

Տեսակէտ

Գ. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ «ՄԵԾ ԵՐԱԶ»ԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱ՛ՇՆ Է ԵԿԱԾ ՄԵԹՐ Գ. ՏԷՐՏԷՐԵԱՆ



Գերսամ Ահարոնեանի ծննդեան 100-ամեակին առիթով, երբ վերստին մտածումը

ուկեցանք մօտենալու անոր կրթողային գործին՝ «Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-

1965» (Պէյրուք, 1965) եւ կարդացինք՝ մասնաւորաբար Ահարոնեանի սեփական

ստորագրութիւնը կրող էջերը, հոգեմտաւոր մեծ գոհունակութիւն ուկեցանք՝ ի

մասնաւորի, կարդալով հետեւեալ երկու մարգարեաշունչ եւ ժամանակակից հնչող պարբերութիւնները, որոնք ուզեցինք ընդգծել եւ յանձնել հանրային կարծիքի ուշադրութեան՝ յատկապէս, մեր նոր սերունդի քաղաքական մտածողութիւն ուկեցող, գործունեայ եւ ճշմարտապէս հայրենասեր, գիտակից եւ յեղափոխական միտքի տեր ուժերուն:

Մարգարեաշունչ առաջին պարբերութիւնը կը խօսի միջազգային յարաբերութիւններու ապագային մասին եւ կ'ըսէ հետեւեալը.

«Մոսկուա եւ Ուաշինկթըն քայլ առ քայլ, դանդաղօրէն, բայց որոշապէս պիտի իրագործեն “accomodation” մը (իրերյարմարեցում), բանակցութիւններով, սակարկութիւններով, փոխադարձ զիջումներով, մասնակի համաձայնութիւններով եւ իրարհասկացողութեամբ: Այդ բանակցութիւններուն նիւթ պիտի դառնան՝ բոլոր միջազգային թէ շրջանային առկախ հարցերը: Եւ այդ խօսակցութիւններուն նիւթը պիտի դառնան օր մը, ոչ հեռաւոր ապագային, Թուրքիան եւ անոր հետ առնչութիւն ուկեցող բոլոր առկախ խնդիրները անպայման: Այդպիսի իրադարձութիւն մը ահա՝ ipso facto նպաստաւոր պիտի ըլլայ մեր հողային դատին համար անխուսափելիօրէն»:



Այսպիսի կանխատեսութիւն մը հարկաւ, լոկ ենթակայական ցանկատեսութիւն մը չէր, երեւակայական պատահականութիւններ ըստ բախտի գուշակելու փորձ մը չէր, այլ՝ իրաւացիօրէն կը հիմնուէր, այդ օրերուն արդէն շօշափելի դարձած «Խաղաղ Զամակեցութեան», երկու բեւեռներուն միջեւ «Ձիւնհալ»ի փաստին վրայ:

Վերյիշենք, որ այդ օրերուն՝ 20-րդ դարի 60-ականներուն, Բ. Աշխարհամարտի անմիջական վաղորդային բռնկած «ցուրտ պատերազմ»ին թե՛ օրերը դադրած էին: Ընդհանուր զինադադար մը կը տիրէր միջազգային հարթակին վրայ՝ Արեւմուտքի եւ Արեւելքի, Կապիտալիզմի եւ Սոցիալիզմի բեւեռներուն միջեւ: Զորեայի եւ Վիեթնամի պատերազմները դադրած էին, կամ կասեցուած էին, ծնունդ տալով Զիւսիսային եւ Զարաւային Զորեաներու եւ Վիեթնամներու: Գարայիպեաններու աթոմական զենքի տագնապը լուծուած էր Գուպայի եւ ԱՄՆ-ի միջեւ՝ Սովետ Միութեան Գերագոյն Սովետի Նախագահ Անաստաս Միկոյեանի խաղաղասիրական միջամտութեամբ:

Պահպանողական հին Վատիկանը գումարած էր՝ Vatican I եւ II (1962-1963) խորհրդաժողովները, եւ՝ այս առիթներով Աշխարհին յղած էր “Pacem in Terris” (եւ Յերկիր՝ Խաղաղութիւն) “Azziorramento” (Այժմեականացում) պատգամող պապական կոնդակները: Զաւասարակշռեալ եւ մասնաւորաբար հակակշռեալ այս երկբեւեռ աշխարհակարգին մէջ՝ ՄԱԿ-ը վերագտած էր միջազգային արդարադատութեան իր պաշտօնը, եւ՝ տասնեակներով նախկին զաղութներ եւ կիսազաղութներ սկսեր էին տիրանալ իրենց անկախութեան՝ ժողովուրդներու ազատ ինքնորոշման իրաւունքին կենսագործումով, եւ՝ գրեթէ ամբողջականօրէն լուծարուած էր Գաղթատիրութեան համաշխարհային համակարգը: Եւ նաեւ՝ Զոկտեմբերեան Սոցիալիստական Յեղափոխութեան 40-ամեակին առիթով (1957 թ.), Սովետ Միութիւնը՝ տիեզերքի Նուաճումին առաջին պատմական քայլը առնելով, յաջողապէս արձակած էր՝ SPOUTNIK արուեստական արբանեակը...:

Սակայն, 20-րդ դարու 80-ականներու սկիզբէն, Ռոնալտ Ռինկընի (ԱՄՆ) եւ Մարկըրէթ Թաչչերի (Մեծն Բրիտանիա) նոր-ազատական, ազատ շուկայական, վայրի դրամատիրութեան վարդապետութիւնը վերջ դրաւ երկու բեւեռներու միջեւ «Խաղաղ



Չամակեցուքեան» ու «Զիւնհալ»ին, եւ «ցուրտ պատերազմ»ի օրերու իմփերիալիստական պատերազմները վերսկսան: Ռիկըն՝ բացայայտ ռազմամոլական թշնամանքի ստրատեգիայով, իսկ Թաչեր՝ քօղարկեալ, աղուխազիտական քայքայիչ տակտիկայով դաժան պայքար մղեցին Սովետ Միութեան դէմ. Ռիկըն՝ Աֆղանիստանի մէջ, իսկ Թաչեր՝ Կորպաչովի ուղեղին մէջ, անոր կլլել տալով՝ ամերիկեւսիոնական գործակալ Ալեքսանդր Եաքովլեւի պատրաստած Փերեսթրոյքան, որուն հիման վրայ՝ ոչ միայն ՍՍՀՄ Սահմանադրութեան 5-րդ Յօդուածը ջնջուեցաւ, որ Կոմկուսին կը վերապահեր՝ երկրի քաղաքական ղեկավարութեան բացարձակ լիազօրութիւնը... այլեւ՝ Կորպաչով ճանաչում տուաւ սոցիալ-դեմոկրատիայի գաղափարականի դրոյթներուն, զոր որդեգրած են Բ. Միջազգայնականի աջ-սոցիալիստ կուսակցութիւնները, Սիոնիզմի ազդեցութեան տակ, եւ որոնք կը հաւատան՝ «բարի» կապիտալիզմին...: (Մինչդեռ, Ժողովրդային Չինաստանի Կոմկուսը՝ որդեգրելով հանդերձ բազմաձեւ տնտեսակարգը, պահպանեց Կոմկուսի քաղաքական ղեկավարութեան բացարձակ լիազօրութիւնը, եւ արձանագրեց տնտեսական ու թեքնոլոյճիական մեծ նուաճումներ...):

Եւ՝ Սովետ Միութեան բեւեռին ինքնալուծարումով ստեղծուեցաւ անհաւասարակչիռ եւ ուրեմն անհակակչիռ միաբեւեռ աշխարհակարգը, ամերիկեան իմփերիալիզմի միահեծան իշխանութեան տակ, եւ՝ միջազգային արդարադատութեան պաշտպան ՄԱԿ-ը՝ պաշտօնաթող, աւելի ճիշդ պաշտօնագեղծ եղաւ, դառնալով՝ ամերիկեան իմփերիալիզմի միակողմանի կամքին կամակատարը... Եւ իմփերիալիստական նոր պատերազմները քարուքանդ ըրին՝ բազմազգ ու բազմակրօն բայց խաղաղ ու չքնաղ Եուկոսլաւիան, Աֆղանիստանը, քաղաքակրթութեան օրրան Իրաքը, Լիպիան ու արաբականութեան բաբախող սիրտը՝ Սուրիան: Իսկ Ֆրանսիս Ֆուքոյաման՝ Սովետ Միութեան ինքնալուծարումը, Կորպաչովի շեղումով, եւ Վարշաւիոյ Ուխտի միակողմանի եւ անպայմանադիր ինքնալուծարումը (առանց պահանջելու որ փոխադարձաբար լուծարուի նաեւ ՕԹԱՆ-



ը...), այս իրադարձութիւնները, կամայականօրէն գնահատեց որպէս Սոցիալիզմի վերջնական պարտութիւն եւ վայրի Կապիտալիզմի վերջնական յաղթանակ, եւ գրեց՝ «Պատմութեան Վախճանը» խորագրով գիրքը, տուեալ համարելով այն հակապատմագիտական ցանկատեսութիւնը, թէ՛ Պատմութիւնը հասած էր, Կապիտալիզմի վերջնական յաղթանակով, մարդկութեան կատարելագոյն հասարակարգին, որմէ անդին նուաճելիք նոր մակարդակ չէր մնացած...: Եւ վայրի Կապիտալիզմի այս նոր-ազատական հասարակարգը, որ կը պահանջէր քանդել բոլոր ազգային պետութիւնները, իրենց ազգային մշակոյթով, սահմաններով ու մաքսատուներով, միջազգային ազատ շուկայ մը ստեղծելու պատրուակով, մեծ գեղծարարութեամբ կոչուեցաւ «Յամաշխարհայնացում» (Globalization, Mondialisation), չարաշահելով մարդոց բնական ակնածանքը համամարդկայնականութեան վստմագոյն իտեալին հանդէպ: Այսինքն՝ վայրագ աշխարհակալութիւնը մկրտուեցաւ «համաշխարհայնացում» անունով...: Իր կարգին, Սամուէլ Հանթինկըն՝ արդարացնելու համար իմփերիալիզմի անվերջանալի, վախճան չունեցող նոր պատերազմները..., գրեց իր «Քաղաքակրթութիւններու Պատերազմը» վերնագրով գիրքը, հիմնուելով Մարկարէթ Թաչերի այն պնդումին վրայ, թէ՛ սովետական դասակարգային թշնամիին վերացումէն ետք, Արեւմուտքը պետք ունի հնարելու անպայման նոր թշնամի մը, որուն սպառնալիքին դէմ հարկ ըլլայ շղթայազերծել նոր պատերազմներ..., քանի որ Կապիտալիզմի գոյատեւութիւնը պայմանաւորուած է պատերազմներով: Եւ՝ այդ նոր թշնամին, ոչ-դասակարգային, այլ քաղաքակրթական, առժամաբար ճշդուեցաւ՝ քարիւղաշատ իսլամ աշխարհը..., բայց, անդիմագիծ, անհասցէ եւ անորոշ անունով՝ «ահաբեկչութիւն»...: Եւ այս նպատակով՝ CIA-ը կազմակերպեց ու բեմադրեց 11 Սեպտեմբերի թատրոնը, զոր առանձին հատորով մերկացուց ֆրանսացի յայտնի լրագրող Թիերի Մէյսանը (Thierry Meyssan), որ իր անհերքելի եւ գիտական փաստարկումներուն շարքին, յիշատակեց թէ՛ թատրոնի նախօրէին, 10 Սեպտեմբեր 2001-ին, Տոնալտ Ռումսֆելտ այցելած է Պըն Լատէնին, Փաքիստանի



մայրաքաղաքի մէկ հիւանդանոցին մէջ. տալով հիւանդանոցին ոչ միայն անունն ու հասցէն, այլեւ՝ Պըն Լատէի սենեակին համարաթիւը..., մատնանշելով թէ՛ իսլամական ահաբեկչական բոլոր կազմակերպութիւնները՝ Իսուան Սուլլիմիններէն մինչեւ «Ալ-Քայիտա» եւ «Տաէշ» ձեռնասուլններն են ամերիկեան իմփերիալիզմին՝ CIA-ի 17 բաժանմունքներով եւ... Արաբական Ծոցի իշխանապետութիւններու ֆինանսաւորումով...:

Սակայն այսօր՝ միջազգային թատերաբեմին վրայ, սկսած է եւ կը շարունակուի՝ հակառակ ուղղութեամբ զարգացում մը, դրական իրադարձութիւն մը: 2008 թուականի Կապիտալիզմի կառուցուածքային համաշխարհային ճգնաժամը կը շարունակուի: Ամերիկեան իմփերիալիզմի եւ «համաշխարհայնացում»ի նահանջն ու վայրէջքը կը շարունակուին: Եւ՝ երեկի միաբեւեռ աշխարհակարգը մտած է իր մայրամուտի հանգրուանին մէջ: Միւս կողմէ՝ տակաւ առ տակաւ կ'ամրապնդուի եւ վերելք կ'արձանագրէ բազմաբեւեռ աշխարհակարգ մը՝ նախկին Սովետ Միութեան միջազգային իրաւական անձնաւորութիւնը շարունակող Ռուսաստանի Դաշնութեան գլխաւորութեամբ եւ Վլատիմիր Փութինի առաջնորդութեամբ: Եւ նոյնիսկ Զենրի Քիսինճեր կը խոստովանի, թէ՛ այսօր արդէն, միջազգային որեւէ հարցի կարգադրութիւնը կարելի չէ՛ առանց Ռուսաստանի գործօն մասնակցութեան: Իսկ հակա-ամերիկեան բազմաբեւեռ աշխարհակարգի հաստատուն խարիսխը կը հանդիսանայ՝ BRICS-ի (Պրագիլ-Ռուսաստան-Յնդկաստան-Չինաստան-Հարաւային Ափրիկէ) միջ-ցամաքամասային ճակատը: Այս ճակատին կողմնակից են՝ Շանկիայի Համագործակցութեան Ռկստի եւ Գուլայի գլխաւորութեամբ Լատին Ամերիկայի սոցիալիստամետ պետութիւնները, Պելառուսիան, Իրանը, Հիւսիսային Զորեան եւ Վիեթնամը, եւ այս բոլորին բարեկամ ուրիշ պետութիւններ՝ Ասիոյ, Եւրոպայի, Ափրիկէի եւ Միջին Արեւելքի մէջ:

2011 թ. Մարտին, ամերիկեան իմփերիալիզմը սկսաւ գործադրել՝ Սուրիոյ ընդդիմադիր վարչակարգը տապալելու եւ հոն՝ իր դրածոներուն իշխանութիւնը հաստատելու իր հին եւ երկար շունչով նախապատրաստած ծրագիրը, ոչ իր ուղղակի



մասնակցութեամբ, այլ՝ տարածաշրջանի իր արբանեակներուն (Իսրայէլի, Թուրքիոյ, Սեուտական Արաբիոյ, Յորդանանի, Զաթարի եւ միւսներու) փոխանորդութեամբ, եւ՝ CIA-ի կողմէ կազմակերպուած, մարզուած, զինուած արդիական զինամիջոցներով ու ֆինանսաւորուած ահաբեկչական գոյնզգոյն ջոկատներու ուղղակի մասնակցութեամբ, յուսալով՝ պիտի քրիկային յաղթանակ մը արձանագրել: Սակայն այդ յաղթանակը կուշանար: Այլեւս, անհրաժեշտ դարձած էր ԱՄՆ-ի ուղղակի միջամտութիւնը...:

Եւ՝ Պարաք Օպամա, 2013 թուին, հրապարակաւ եւ պաշտօնապէս սպառնաց՝ Նոյն տարուան Սեպտեմբեր 6-ին, ռմբահարել՝ Սուրիոյ 10 ստրատեգիական կեդրոնները... սակայն, Սեպտեմբեր 6-ին՝ Օպամա ընկրկեցաւ եւ հրաժարեցաւ գործադրել իր սպառնալիքը ուղղակի միջամտելու՝ Սուրիոյ դէմ համաշխարհային յետադիմութեան մղած աւերիչ պատերազմին: Զանի որ ամիս մը առաջ՝ Օգոստոս 8-ին, Պրիւքսելի ՕԹԱՆ-ի կեդրոնին մօտ Ռուսաստանի զինուորական մնայուն ներկայացուցիչը ազդարարած էր հետեւեալը.

«ՕԹԱՆ-ը՝ առանց Ապահովութեան Խորհուրդի արտօնութեան, ներխուժեց եւ քանդեց Եուկոսլաւիան, Իրաքը եւ վերջերս Լիպիան: Մենք քաջ գիտենք, որ դուք կը ծրագրէք Լիպիոյ նախընթացը կրկնել Սուրիոյ դէմ: Ռուսաստան վճռապէս դէմ է այդ ծրագրին, եւ բոլոր միջոցներով պատրաստ է արգիլելու՝ այդ նախընթացներուն կրկնումը Սուրիոյ դէմ...»:

Ուրեմն, ասիկա միաբեւեռ աշխարհակարգի Ոստիկանապետ Օպամայի շրջադարձային առաջին ընկրկումն էր՝ բազմաբեւեռ աշխարհակարգի լոքոմոթիվ Փութինի վերջնագրին առջեւ: Այլ խօսքով՝ Գերսամ Ահարոնեանի կանխագուշակած Մոսկուա-Ուաշինկթըն «Էքոմոտէշըն»ի ճամբուն ուղղութեամբ առնուած առաջին քայլը:

Երեք տարի ետք, 2016 Նոյեմբեր 8-ին, ԱՄՆ-ը երկրի նախագահ ընտրեց Տոնալտ Թրամփը՝ Զիլերի Զինթոնի դէմ, եւ այս վերջինը՝ պաշտօնապէս ամբաստանեց եւ կը շարունակէ ամբաստանել Փութինը՝ Թրամփի յաջողութեան օժանդակած ըլլալու



յանցանքով, քանի որ Թրամփ՝ իր կարգին, նախագահական ընտրարշաւի օրերուն, հրապարակաւ ու բազմիցս գովաբանած էր Փուլինը...: Ուրեմն, ԱՄՆ-ի ընտրարշաւի երկրորդ փուլի «մեծ ընտրողներ»ու մեծամասնութիւնը՝ Դեկտեմբեր 20-ին եւս ընտրելով Թրամփը, համակրած ըլլալով Փուլինին, որ Արեւելք-Արեւմուտք «Էքոմոտէյշըն»ի ջատագովն է, իսկ Զիլերի Զիլնթոն հակառակորդը, եւ հետեւաբար ինք պիտի չըլլար Օպամայի առաջին քայլը երկրորդորդը, այլ՝ Թրամփը...:

Չետեւաբար, 2017 Յունուար 20-ին, եթէ՝ չխանգարուի Թրամփի մուտքը Սպիտակ Տուն, եւ անկէ ետք ալ՝ չհահաբեկուի ԱՄՆ-ի ռազմարդիւնաբերութեան շէֆերուն կողմէ... եւ եթէ՝ Թրամփի հաւատարիմ մնայ գաղտնօրէն Փուլինին իր տուած խոստումներուն, ճամբան պիտի բացուի՞ կէս դար առաջ Գ. Ահարոնեանի կանխագուշակած Մոսկուա-Ուաշինկթոն «Էքոմոտէյշըն»ին առջեւ...: Ահա այս է մեզ հետաքրքրող կարեւորագոյն հարցումին պատասխանը: Այդպիսի իրադարձութեան մը պարագային, երբ երկկողմանի բանակցութիւններուն շօշափած հարցերուն կարգը հասնի Թուրքիոյ եւ անոր հետ առնչութիւն ունեցող առկախ խնդիրներուն, հնարաւոր պիտի ըլլայ քննարկել նաեւ՝ մեր հողային պահանջատիրութիւնը՝ Սելրի դաշնագրի եւ Ուիլսոնեան իրաւարար վճիռի 100-ամեակի սեմին:

Իսկ այդ պահին, ի՞նչ կը պահանջուի մեզմէ՝ որպէս անխուսափելի եւ անշրջանցելի դերակատարութիւն:

Ահա այս է Ահարոնեանի երկրորդ՝ ժամանակակից հնչող պարբերութիւնը այսօր, որ հետեւեալն է.

«Սփիւռքահայութիւնը իր կարգին, պատմական այդ առաքելութեան (հողային դատի հետապնդումին) պէտք է լծուի համազգային զօրաշարժով, ամբողջական նուիրումով եւ համակարգեալ աշխատանքով:

«Անհրաժեշտ է, առանց ժամանակ կորսնցնելու (Չայոց Ցեղասպանութեան լոկ բարոյական, պղատոնական ճանաչումին համար) պէտք է մեջտեղ բերել՝ **ՅԱՅՎԱԿԱՆ ԴԱՏԻ ԶԵՏԱՊՆԴՄԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**: Մարմին, որ ներկայացնէ բոլոր հայ գաղթածախները. մարմին, որ ծնունդ առնէ՝ Սփիւռքահայ



մեծ համաժողովէ մը. մարմին, որ վայելէ մեր ժողովուրդին վստահութիւնը: Եւ

մարմին, որ ըլլայ ՄԱՅՈՒՆ: ... Իրատես պէտք է ըլլանք բոլորս, եւ պէտք է

գիտնանք, որ դիւրին եւ արագ լուծումներ չկան մեր հարցին համար...:

Բռնագրաւեալ հողերուն (գէթ մասնակի) ազատագրումով ամբողջացած (Սովետ

Յայաստանի) հայկական հարազատ պետութեան սահմաններուն մէջ՝

համախմբեալ մէկ ժողովուրդ, մէկ մշակոյթ եւ մէկ քաղաքակրթութիւն (կրնանք

ունենայ)»:

Կես դար առաջ, երբ միջազգային բեմին վրայ կը տիրէր Մոսկուա-Ուաշինկթոն

«խաղաղ համակեցութեան» մթնոլորտը, Ահարոնեան պահանջած էր՝ առանց

ժամանակ կորսնցնելու, ստեղծել Սփիւռքահայութիւնը ներկայացնող

«Կեդրոնական» եւ «մնայուն» «մարմին» մը «սփիւռքահայ մեծ ժողովէ մը» ընտրուած,

որ վայելէր «մեր ժողովուրդին վստահութիւնը» մեր հողային դատին հետապնդման

համար՝ «համազգային զօրաշարժով» մը, մինչեւ՝ մեր հողային պահանջատիրութեան

յաջողութեամբ պսակումը: Ահարոնեանի այս կանչը մնաց ձայն բարբառոյ

յանապատի՝ մեր սեփական թերացումով, բայց նաեւ՝ «խաղաղ համակեցութեան»

փլուզումովը՝ միաբեւեռ աշխարհակարգին կողմէ:

Այսօր սակայն, երբ Փութին-Թրամի մերձեցումին կանխանշաններուն լոյսին

տակ՝ հնարաւոր կը թուի ականատես ըլլալը Մոսկուա-Ուաշինկթոն նորատիպ խաղաղ

համակեցութեան մը, հրամայական կը դառնայ՝ առանց նոր ժամանակ կորսնցնելու,

ձեռնարկել՝ Տարագիր Արեւմտահայութեան Համասփիւռքեան Բոնկրեսի (ՏԱՅԲ-ի)

կազմակերպումին, որ յար եւ նմանն է Ահարոնեանի պահանջած՝ Հայկական Դատի

Հետապնդման Կեդրոնական Մարմինին (ՀԴՀԿՄ-ին), եւ որ վստահաբար պիտի

արժանանայ մեր ժողովուրդի անվերապահ վստահութեան, քանի որ պիտի ըլլայ՝

Տարագիր Արեւմտահայութեան կեդրոնական, ներկայացուցչական (ընտրովի) եւ

միակ լիազօր Մարմինը: ՏԱՅԲ եւ ՀԴՀԿՄ ունին միեւնոյն նպատակը, եւ ՏԱՅԲ

պարզապէս իրաւագիտական շեշտուած բանաձեւումն է ՀԴՀԿՄ-ի:

Արդ, ներկայ պահին, ՏԱՅԲ-ի կազմակերպումը՝ արդէն իսկ ուշացած



հրամայական մըն է, քանի որ կը գտնուինք Սեւրի դաշնագրի եւ Ուիլսոնեան իրաւարար վճիռի 100-ամեակէն միայն չորս քայլ ասդին, ինչ որ թայմինկի առումով, աւելի կարելոր գործօն մըն է քան՝ Մոսկուա-Ուաշինկթոն վերահաս մերձեցումը, եւ պատմական յարմարագոյն առիթն է մեր հողային պահանջատիրութեան համար, քանի որ մենք թերացանք օգտագործելու Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցը... եւ տեղքայլ ըրինք՝ միայն պահանջելով Մեծ Եղեռնի լոկ բարոյական ճանաչումը: ՏԱՅԸ-ի կազմակերպումին համար արագաշարժութիւնը՝ ոչ միայն ստիպողական է, իսկ ստ սեղմ պայմանաժամին պատճառով, այլեւ՝ այն պատճառով, որ հիմա արդէն կրնանք նպաստաւորուիլ՝ 2004 թուականէն ի վեր գործող շարժումի մը ցարդ կատարած քաղաքական, իրաւական եւ կազմակերպչական երախտաշատ աշխատանքէն: Այդ շարժումը, որ ցարդ մեծապէս թերացած է տեղեկատուական մարզէն ներս, «Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն»ը հռչակած շարժումն է, որ արդէն՝ 17,835 տարագիր արեւմտահայերու ձայներով ընտրած է 64 անձերէ կազմուած «խորհրդարան» մը, նշանակած է «կառավարութիւն» մը «վարչապետ»ով եւ «արտաքին գործոց նախարար»ով եւ ընտրած՝ «ԱՀՀ նախագահ», յանձնու Արմենակ Աբրահամեանի: Այս շարժումը մշակած է նաեւ «ԱՀՀ»ի սահմանադրութեան նախագիծ մը, որ պիտի քննարկուի «ԱՀՀ խորհրդարան»ին մէջ:

Մեզի կը մնայ՝ նախ՝ մօտէն ծանօթանալ այս շարժումին հրատարակած փաստաթուղթերուն: Ապա՝ որոշել թէ կրնա՞նք անոր ցարդ կատարած աշխատանքը համարել սկիզբ մը՝ ՏԱՅԸ-ի կազմակերպումի աշխատանքներուն համար, որպէսզի՝ աշխատինք ընդարձակելու մեծապէս՝ 17,835 արեւմտահայերու թուաքանակը, համեմատաբար Տարագիր Արեւմտահայութեան թիւին, որ կը հասնի միլիոններու...:

Ապա նաեւ՝ ընտրելու ՏԱՅԸ-էն բխած խորհրդարան մը եւ կառավարութիւն մը, որոնց առաջին թեկնածուները համարուին ներկայ «խորհրդարան»ին եւ «կառավարութեան» անդամները՝ եթէ փափաքին: Եւ վերջապէս՝ ընտրելու ՏԱՅԸ-ի նախագահը՝ «ԱՀՀ նախագահ Արմենակ Աբրահամեանը» ընդունելով՝ որպէս ՏԱՅԸ-ի նախագահական թեկնածուներէն առաջինը, եթէ փափաքի:



Այս բոլորը չենք կրնար իրականացնել՝ առանց որդեգրելու՝

Համահայկականութեան նշանաբանը եւ առանց ցուցաբերելու՝ յեղափոխական

շունչ եւ քաղաքական անկոտորում կամք, կամ՝ դանդաղելով՝ երկմտութեամբ եւ մեր

ուժերուն հանդէպ անհաւատութեամբ:

Արագաշարժութիւնը այսօր՝ չի թուիր ըլլալ՝ շտապողականութիւն, այլ՝

ՍՏԻՂՈՂԱԿԱՆ...:

•••

Մեր այս լաւատեսութիւնը անգամ մը եւս կ'ամրապնդուի, երբ կրկին անգամ

ուշադրութեամբ կարդանք Ահարոնեանի առաջին պարբերութեան եզրափակիչ սա
տողերը.

«Այդ խօսակցութիւններուն սիւթը պիտի դառնան օր մը, ոչ հեռաւոր

ապագային, Թուրքիան եւ անոր հետ առնչութիւն ունեցող բոլոր առկախ

խնդիրները ԱՆՊԱՅՄԱՆ: Այդպիսի իրադարձութիւն մը ահա՝ IPSO FACTO

նպաստաւոր պիտի ըլլայ մեր հողային դատին համար ԱՆԽՈՒՄԱՓԵԼԻՕՐԵՆ»:

Այս «անպայման», “ipso facto” եւ «անխուսափելիօրէն» մակբայներով

շեշտաւորուած համոզումը արտայայտող Գերսամ Ահարոնեանը՝ հմուտ գիտակ մըն

Է Հայոց Պատմութեան, Հայաստանի Աշխարհագրութեան, Ընդհանուր Ազգաց

Պատմութեան (General History), Տնտեսագիտութեան (Economics),

Քաղաքագիտութեան (Politics) եւ՝ մասնաւորաբար ալ, Փանթուրքիզմի

վարդապետութեան սիոնական ակունքին եւ արեւմտաեւրոպական իմփերիալիզմի

դէպի Արեւելք ծաւալումի ծրագրին, որուն թիրախն Է՝ ոչ միայն Հայաստանի

գոյութիւնը, այլեւ՝ Ռուսաստանի ազգային անվտանգութիւնը: Ուրեմն, երբ Փութին՝

Թրամփի հետ պիտի քննարկէ «Թուրքիոյ հետ առնչութիւն ունեցող բոլոր առկախ

մնացած խնդիրները անպայման», անպայմանօրէն եւ «անխուսափելիօրէն» պիտի

քննարկէ նաեւ՝ Արեւմտահայաստանի բռնագրաւումը Թուրքիոյ կողմէ: Քանի որ՝

Արեւմտահայաստանի հողերուն նոյնիսկ մասնակի ազատագրումով եւ միացումովը

Արեւելահայաստանին՝ պիտի զօրանայ միացեալ Հայաստանի պատուարը,



Փակթուրքիզմի վտանգին դեմ... նպաստելով Ռուսաստանի անվտանգութեան...: Եւ
Փութին՝ Թրամփին պիտի յիշեցնէ՝ ոչ միայն Սան-Սթեֆանոյի դաշնագիրը,
Ռուսաստանի յեղափոխական կառավարութեան դեկրետը «Թուրքահայաստանիի
մասին» եւ Սեւրի դաշնագիրը, այլեւ՝ պիտի պահանջէ Թրամփէն, որ ԱՄՆ-ի
Նախագահի իր հանգամանքով կեանքի կոչէ ԱՄՆ-ի Նախագահ Ու. Ուիլսոնի
իրաւարար վճիռին գործադրութիւնը՝ Թուրքիա-Հայաստան սահմանագիծին
սրբագրումին համար, եւ ասիկա՝ Սեւրի դաշնագրի եւ Ուիլսոնեան իրաւարար վճիռի
100-ամեակին առիթով...: Եւ Մոսկուա այս մէկը պիտի պահանջէ Ուաշինկթըն
մեկնելով՝ անշուշտ, Ռուսաստանի ազգային շահերէն, որոնք միաժամանակ կը
համընկնին Հայոց շահերուն հետ:

Իսկ Տարագիր Արեւմտահայութիւնը պարտի անյապաղ ստեղծել ՏԱՀԶ-ը,
որպէսզի՝ իր իրաւատէրի հանգամանքով, գործէ այս ուղղութեամբ՝ Ուաշինկթոնի եւ
Մոսկուայի մօտ միաժամանակ:

Այս է ներկայ պատմական պահին ստիպողական պահանջը:

Պէյրուք, 26 Դեկտեմբեր 2016 Գ.Տ



Տեսակէտ

ՍՈՒՐԻԱԶԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԻՐԵՐԱՅԱԶՈՐԴ ԵՐԿՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ

Գրեց՝ Դոկտ. Հիլտա Գալֆայեան-Փանոսեան



2016 թուականի Օգոստոս 1-էն 5 Աղուերանի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան կազմակերպած համահայկական 7-րդ կրթական խորհրդաժողովը: Պիտի քննարկուէին սփիւռքահայ կրթական ոլորտի մէջ գոյութիւն ունեցող հիմնահարցերը, իրագործուող կրթական ծրագրերու բարելաւման միջոցները, Հայաստանի կողմէ աջակցութեան յետագայ քայլերը եւ բարեփոխման առաջարկութիւնները:

Յաւալի է սակայն, որ Կրթութեան եւ Գիտութեան Նորընտիր Նախարար Պրն. Լեւոն Սկրտիչեան կը բացակայէր իր նախարարութեան կազմակերպած այս խորհրդաժողովէն, որ իրեն համար լաւ առիթ մը պիտի ըլլար հեռաւոր երկիրներէ ժամանած կրթական մշակներու գործունեութեան եւ ներկայ դժուարութիւններուն անձամբ ծանօթանալու, յաւելեալ հարցումներ յղելու, մանրամասնութիւններուն տեղեկանալու եւ անոնց հիման վրայ որոշումներ կայացնելու եւ զանոնք գործադրելու: Իրեն փոխարէն Նիստերը կը վարէր Նախարարի աշխատակազմէն Պրն. Կարէն Մնացականեան:

Հայաստանի անկախացումէն ի վեր «Սփիւռքահայութիւնը ճանչնալու հարց» մը ծագած է Հայաստանի համար: Քննարկումներու առարկայ դարձած են Սփիւռքի մէջ Հայու ինքնութեան տժգունացման եւ արեւմտահայ լեզուի տկարացման պարագաները, որպէս հետեւանք՝ շփումները կասեցնող խորհրդային Միութեան 80-ամեայ անջատողական քաղաքականութեան, ուղղագրութեան տարբերութեամբ գրաւոր հաղորդակցութեան բացակայութեան, նաեւ՝ համաշխարհայնացման մղող մերօրեայ ազդակներու: Սփիւռքի ճանաչողութեան համար է որ 2009-ին ստեղծուած է Սփիւռքի Նախարարութիւնը եւ Նախարարուհի Տիկ. Հրանոյշ Յակոբեան անձամբ այցելած է սփիւռքահայ կարգ մը գաղութներ, նաեւ կազմակերպած է արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման կարելիութիւններու քննարկման նուիրուած համաժողով, ներառեալ՝ երկու ուղղագրութիւններու միասնականացման հարցը:

Իսկ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութիւնը 2001 թուականէն ի վեր արդէն իսկ վեց գիտաժողովներ կազմակերպած է, տեղեկանալու համար սփիւռքեան գաղութներու կրթական գործունեութեան եւ դժուարութիւններուն, նաեւ կը հովանաւորէ սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստման տարեկան ամառնային դասընթացները:



Երկու նախարարութիւններու այս նախաձեռնութիւններէն բացի, պէտք է նշել նաեւ Անթիլիասի Կաթողիկոսութեան 2011-ին կազմակերպած համահայկական կրթական համաժողովը Անթիլիասի մէջ, կրթական գետնի վրայ բարեփոխութեան կարօտող կէտերու մատնանշումին նուիրուած, որպէսզի կարելի ըլլայ արեւմտահայ խօսակցական թէ գրաւոր լեզուի ուժեղացման նպաստել:

Կը տեսնուի, որ թէ Հայաստանի, եւ թէ Սփիւռքի կողմէ լուսարձակները կեդրոնացած են սփիւռքահայ կրթական կեանքը բարելաւելով արեւմտահայերէնի վիճակը զօրացնելու հարցին վրայ: Ուստի, պարզուած է, թէ ի՞նչ գետիններու վրայ Հայաստանի իշխանութիւնները կրնան աջակցիլ Սփիւռքին:

Այս բոլոր քննարկումները սակայն, առ այժմ կը մնան տեղեկատուութեան եւ ճանաչողութեան սահմանին վրայ: Տակաւին ճամբայ կայ կտրելիք դէպի հասկացողութիւն եւ մանաւանդ՝ գործադրութիւն:

Հայաստանի Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան Օգոստոսին կազմակերպած եւ երեք օրերու վրայ տարածուող կրթական այս 7-րդ համաժողովն ալ կը զետեղուէր նոյն շրջագիծին մէջ: Լիազումար նիստերուն զեկուցումներով հանդէս եկողներս տասը հոգի էինք: Իսկ մասնախումբերու մէջ քննարկուող հարցերուն՝ ներկաներէն իւրաքանչիւրը կրնար մասնակցիլ, հարցումներ ուղղել կամ հարցեր բարձրացնել:

Նպատակս զեկուցումներէն ամեն մէկուն մասին արտայայտուիլ չէ: Կ'ուզեմ միայն անդրադառնալ շատ կարեւոր եւ այժմեական հարցի մը, որ քննարկուեցաւ մասնախումբերէն մէկուն մէջ, «Հայաստանում Սիրիահայերի կրթութեան կազմակերպման ու ինտեգրման հիմնախնդիրները, դրանց լուծման հնարաւոր ուղիները» նիւթով:

Ինչպէս գիտենք, սուրիական պատերազմի հետեւանքով, ազգային գետնի վրայ Սփիւռքի մեր ամենալաւ կազմակերպուած սուրիահայ գաղութը քանդուեցաւ, ժողովուրդի կարեւոր մէկ տոկոսը ստիպուած արտագաղթեց տարբեր երկիրներ: Շուրջ քսանհինգ հազար Հայեր ալ ներգաղթեցին Հայաստան: Սփիւռքի նախարարութիւնը, նախարար Տիկ. Հրանոյշ Յակոբեանի գլխաւորութեամբ կարելին ըրաւ, ջանալով հարթել անոնց բնակարանային եւ այլ հարցերը: Նշուած Օգոստոսեան կրթական համաժողովին ալ Սուրիահայոց հարցերուն եւ անոնց ստացած լուծումներուն մասին նիւթական եւ բարոյական մանրամասն տեղեկատուութիւն մը կը կատարէր սուրիահայ տիկին մը, որ ՄԱԿ-ի կողմէ լիազօրուած էր զբաղելու սուրիահայ երախաներու կրթութեան հարցերով:

Տիկինը յայտնեց, թէ վերջին չորս տարուան ընթացքին Հայաստան ներգաղթած Սուրիահայերու բազմութենէն 1600 երախաներ ընդգրկուած են Հայաստանի հանրակրթական դպրոցներուն մէջ: Կան նաեւ սուրիահայ 60 ուսուցիչներ:

Ես տեղեակ էի, որ ժամանակին, երբ այդ երախաները նոր կը բերուէին Երեւան, Հայաստանի իշխանութիւններուն կողմէ յայտարարուած էր, որ անոնք համախումբ կերպով պիտի տեղաւորուին երեւանեան դպրոցներու մէջ եւ սուրիական կրթական պետական ծրագրի համաձայն պիտի կրթուին՝ իրենց նման ներգաղթած ուսուցիչներու միջոցով: Այսինքն, հաւաստում տրուած էր, որ երախաներու կրթական կեանքը առանց մեծ փոփոխութեան պիտի շարունակուի Հայաստանի մէջ: Երկրորդ տարուան ընթացքին սակայն տեղեկացանք, թէ այդ երախաները այլեւս համախումբ կերպով չեն ուսանիր, այլ



ցրուած են երեւանեան զանազան հանրակրթական դպրոցներու մէջ՝ որպէսզի կարենան համարկուիլ հայաստանեան կեանքին: Ասիկա տրամաբանական լուծում մը թուած էր:

Արդ, համաժողովի ընթացքին ձայն խնդրելով հարց տուի թէ այդ 1600 երախաները շաբաթական քանի՞ ժամ արեւմտահայերէն կը սորվին:

Տիկինը պատասխանեց թէ անոնք արեւմտահայերէնի դասաւանդութիւն չունին, այլ՝ հայաստանցի երախաներու նման՝ արեւելահայերէնով կը հետեւին կրթական ընդհանուր ծրագրին: Դարձեալ խօսք առնելով բողոքեցի այդ որոշման դէմ, ըսելով՝ «Ինչքան ալ տրամաբանական ըլլայ Հայաստանի պայմաններուն յարմարելու նպատակով երախաներու ցրումը տարբեր դպրոցներու մէջ, յամենայն դէպս անոնք արեւմտահայ են եւ ընդունելի չէ, որ արեւմտահայերէնի դասաւանդութիւն չունենան, մանաւանդ որ արեւմտահայերէն դասաւանդող հալէպահայ 60 ուսուցիչներ կան: Այսինքն, կարելի չէ արդարանալ, ըսելով որ արեւմտահայերէնի ուսուցիչներ չունինք Հայաստանի մէջ: Արեւմտեան երկիրներու մէջ մենք, հայ լեզուի ուսուցիչներս, մէկ աշակերտի համար իսկ տունէ-տուն կը շրջինք, ծնողները համոզելու համար, որ իրենց զաւակը հայկական միօրեայ դասընթացքի արձանագրեն: Այսպէս կը վարուինք՝ պարզապէս արեւմտահայերէնի պաշտպանութեան համար, Արեւմտահայու մեր ինքնութեան գոյատեւման համար: Արեւմտահայերէնը ազգային ինքնութեան հիմքն է Սփիւռքահայերուս համար: Հետեւաբար անընդունելի է, որ արեւմտահայ ծագում ունեցող, արեւմտահայերէն խօսող, կարդացող, գրող 1600 երախաներ միանգամընդմիջտ կտրուին իրենց ար- մատներէն, Արեւմտահայու ինքնութենէն եւ լեզուէն, չկարենան զարգացնել իրենց գիտցած արեւմտահայերէնը: Մանաւանդ, որ Հայաստան-Սփիւռք կապերու ամրացման կարելորութեան պատճառով 12 տարիներէ ի վեր գոյութիւն ունի գործակցութիւն՝ Փարիզի «ՄԱՇՏՈՅ» Հայ լեզուի պաշտպանութեան միութեանս եւ Երեւանի Մանկավարժական համալսարանի «Սփիւռք գիտաուսումնական կեդրոն»-ի միջեւ, արեւմտահայերէնի ուսուցիչներ պատրաստելու եւ արեւմտահայերէնը հայաստանեան դպրոցներու մէջ յետագային դասաւանդելու նպատակով: Արդ, հալէպահայ 1600 աշակերտներու գոյութիւնը հայաստանեան դպրոցներու մէջ հիանալի առիթ մըն է արեւմտահայերէնը Հայաստանի հանրակրթական դպրոցները մտցնելու տեսակետով: Ասոր համար բաւական է տնօրինել, որ հալէպահայ 60 ուսուցիչներուն ամբողջ դասաւանդեն նաեւ Երեւանի Մանկավարժական համալսարանէն շրջանաւարտ եւ «Սփիւռք գիտաուսումնական կեդրոն»-ի մէջ արեւմտահայերէն լեզուի եւ գրականութեան դասաւանդման մասնագիտութիւնը ձեռք բերած մօտ 500 ուսուցիչները:

Անոնցմէ ամեն մէկը արդէն մեկական տարի «փորձական դասաւանդութիւն» կիրարկած է Երեւանի եւ Արցախի դպրոցներուն մէջ եւ փորձը յաջող արդիւնք տուած է՝ մեծ հետաքրքրութիւն ստեղծելով ծնողներու եւ աշակերտներու շրջանակին մէջ: Նաեւ մեզի հրահանգուած է պատրաստել դասագիրք, որպէսզի բոլոր ուսուցիչները կարողանան զայն կիրարկել: Հրահանգը գործադրուած է եւ դասագիրքը, լեզուի եւ գրականութեան գոյգ բաժիններով, տպագրութեան պատրաստ է: Ուրեմն անհրաժեշտ է իշխանութիւններէն պահանջել արեւմտահայերէնի ուսուցումը Հայաստանի դպրոցներուն մէջ մտցնելու համար հարկաւոր միջոցներուն դիմել: Ամբողջ Սփիւռքահայութիւնը ցնցուած է երկու տարիէ ի վեր, տեղեկանալով ինչո՞ք կազմակերպութեան յայտարարութեան, թէ արեւմտահայերէնը «ապագան վտանգուած» լեզուներու շարքին դասուած է: Ամենուրեք ձեռնարկներ կը կատարուին դէպքերու ընթացքը փոխելու եւ արեւմտահայերէնը փրկելու համար, այսպէս՝ նոր գիրքեր կը հրատարակուին, դասախօսութիւններ կը կազմակերպուին, դպրոցական



հանդիսութիւնները կը բազմապատկուին, երախաները եւ ժողովուրդը հայախօսութեան կը մղուին, նոյնիսկ համացանցային առձեռն բառարան կը պատրաստուի՝ կայքէջի վրայ զետեղուելու համար: Այս բոլորը գերմարդկային ճիգեր են՝ արեւմտահայ լեզուն եւ Արեւմտահայոյ ինքնութիւնը տեւականացնելու համար, մինչ Զայաստանի մէջ, ինչպէս կ'երեւի, նման մտահոգութիւն գոյութիւն չունի, ընդհակառակն, 1600 աշակերտներ գերծ կը կացուցուին իրենց մայրենի լեզուի ծանօթութիւնը խորացնելու կարելիութենէն»:

Խօսքերս ամբողջացուցի, յիշեցնելով՝

«Արեւմտահայերէնը, Յեղասպանութեան ենթարկուած ժողովուրդի մը կողմէ ազգային աղետէն փրկուած մշակութային գանձ մըն է ու բոլորիս ժառանգութիւնը: Եւ որպէս գրաբար մայր լեզուն սերած հայերէնի երկու ճիւղերէն մէկը, ո՛չ միայն Արեւմտահայոյ ինքնութեան հիմքն է Սփիւռքի մէջ, այլ՝ ժառանգական իրաւունքն է նաեւ արեւելահայ երախաներուն: Անոնք ալ պետք է զայն գիտնան: Արդէն ԶՅ Սահմանադրութեան «Լեզուի մասին» յօդուածը կը նշէ, թէ Զայաստանի պաշտօնական լեզուն հայերէնն է, այլ ո՛չ թէ արեւելահայերէնը միայն, եւ կը տնօրինէ երկու ուղղագրութիւններու միասնականացումը, այլ ո՛չ թէ ներկայիս Զայաստանի մէջ գործածուող աբեղեանական ուղղագրութեան յաւերժացումը: Ուստի, դպրոցներէ եւ ԲՈՒՅ-երէ ներս, դասաւանդութեան միջոցով անհրաժեշտ է իր անտեսուած վիճակէն դուրս հանել արեւմտահայ լեզուն եւ զայն բնակեցնել, ապրեցնել Զայաստանի մէջ: Օտար երկիրներ արեւմտահայերէնի դասընթացքներ հաստատած են իրենց համալսարաններուն մէջ, մինչ Զայաստանի մէջ համալսարանաւարտ հայ լեզուի ուսուցիչներ դժուարութիւն ունին կարդալու եւ խորքով հասկնալու արեւմտահայերէնը: Լեզուի հարցը ռազմավարական հարց մըն է Զայաստանի համար: Որպէս Զայոց հայրենիք, Զայաստան պարտաւոր է այս լեզուական հարցը լուծել՝ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԿԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՐԴԵԳՐԵԼՈՎ: Զայոց հայրենիքը պետք է դառնայ ո՛չ միայն արեւելահայերէնի, այլ նաեւ արեւմտահայերէնի ուսուցման եւ զարգացման կեդրոն՝ համայն հայութեան համար»: Խօսքերուս ընթացքին սրահէն ներս մտած էր Սուրիայէն Բերիոյ Թեմի առաջնորդ Շահան արքեպիսկոպոս Սարգիսեան: Լսելով իմ վրդովումս, ինձմէ յետոյ ինք խօսք առաւ եւ նոյնպէս բացատրեց արեւմտահայերէնի վտանգուած վիճակը, Զայոյ ինքնութեան պահպանման իմաստով արեւմտահայերէնի ունեցած կարեւորութիւնը եւ արեւմտահայերէնի դասաւանդման անհրաժեշտութիւնը սուրիահայ աշակերտներուն՝ անմիջականօրէն:

Սրբազան հօրմէ յետոյ խօսք առաւ քուս նստած տիկին մը՝ Լենա Նազարեան, որ յայտնեց, թէ ինք հալէպահայ ուսուցչուհիներէն մէկն է եւ իր աղջիկն ալ այդ 1600 աշակերտներէն մէկն է: Ինք ալ վրդոված շեշտով յայտնեց, թէ շատ մեծ ցաւ կը զգայ արեւմտահայերէնին վերապահուած այս անտարբեր վերաբերումին համար: Սրահին մէջ գտնուողներէն մէկ քանին զանազան ձեւեր առաջարկեցին արեւմտահայերէնի դասաւանդման համար, ինչպէս՝ արեւմտահայ թեքումով դպրոց մը բանալ եւ կամ, առ նուազն, կիրակնօրեայ դասընթացք հաստատել:

Նիստի վերջաւորութեան առաջարկուեցաւ բանաձեւ մը, որուն մէջ Զամաժողովը այս հարցը իշխանութիւններու ուշադրութեան կը յանձնէ եւ կը պահանջէ անպայման ձեւ մը գտնել արեւմտահայերէնի ուսուցման համար Զայաստանի դպրոցներուն մէջ: Զամաժողովի այս նիստէն շատերս դուրս եկանք ընկճուած, հայրենիքի մէջ արեւմտահայերէնի այս անարգուած վիճակէն անձնապէս վիրաւորուած, ուրիշներ ալ սրահէն դուրս եկան յոյսով լեցուած եւ լեզուի պաշտպանութիւնը կատարած մարդու գոհունակութեամբ...:



Յամենայն դեպս, լսեցինք ու տեղեկացանք թէ Նոյեմբեր 26-ին Երեւանի մէջ կայացած Է երկրորդ համաժողով մը «Արեւմտահայերէնը Հայաստանի մէջ, մարտահրաւերներ, հեռանկարներ» խորագրով եւ կազմակերպուած «Հալէպ» հայրենակցական բարեսիրական Կազմակերպութեան (ՀԲՀԿ) կողմէ, Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան եւ ՀԲԸՄ-ի աջակցութեամբ, որուն մասնակցած են լեզուագետներ, ազգագրագետներ, բանասերներ, ինչ որ կը յուսադրէ մեզ, քանի որ այնտեղ ալ նման բանաձեւով մը պետութենէն պահանջուած է ռազմավարական մօտեցում ունենալ Սփիւռքահայոց լեզուին եւ ինքնութեան սպառնացող այս հարցին հանդէպ՝ դպրոցներէ ներս մտցնելով արեւմտահայերէնի դասաւանդութիւնը: Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան կողմէ խօսք առնելով Արտաքին կապերու եւ Սփիւռքի վարչութեան պետ Արթուր Ղազարեան ապահովութիւն տուած է, որ գործնական միջոցներու պիտի դիմուի:

Ի հարկէ, ժամանակը պիտի ցոյց տայ, թէ ի՞նչ ճակատագիր կ'ունենան արեւմտահայ լեզուն եւ մշակոյթը Հայաստանի մէջ՝ Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման խորքին վրայ: Յուսանք եւ սպասենք, նկատի ունենալով սակայն, որ դարը շատ արագ է եւ կորսուած ժամանակը մեզ չի ներեր:

Հ. Գ.-Փ.

«ՄԱՇՏՈՑ» Հայ Լեզուի Պաշտպանութեան Միութեան Հիմնադիր եւ նախագահ

Փարիզ, Յունուար 2017

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Բառերէն անդին կայ խօսքը...Խօսքէն անդին կայ կեցուածքը...Կեցուածքէն անդին կայ վերաբերմունքը...Վերաբերմունքէն անդին կայ արարքը՝ յստակ, տեսանելի, զգալի, գործնական...

.....

Մարդուն մէջ միշտ ալ փնտռած եմ մարդը, անոր մարդկային սիրտը, հոգին, որոնք զիս անչափ յուզած են, երբ անոնց մէջ տեսած, զգացած եմ նշոյլը իրա՛ւ անկեղծութեան, ազնուութեան, ներողամտութեան, ներքին գեղեցկութեան, սիրոյ ջերմութեան...որոնք բոլորը միասին կը ստեղծեն այն լուսաւոր մթնոլորտը, որուն տոչորող ծարաւը ունի մարդը՝ ներկայ մթամած ժամանակներուն....

.....

Սեփական սխալը ընդունիլը բարոյական քաջութիւն է, միաժամանակ՝ անկէ ձերբազատուիլ է, զայն յաղթահարել է, իր ես-ի նեղ պատեանէն դուրս գալ եւ տիեզերական հայեացքով դիտել կարենալ է...Սեփական սխալը ընդունիլը պատասխանատուութիւն ստանձնել եւ ազատ ըլլալ կ'ենթադրէ....



.....

Ազնուութիւնը, բարութիւնը, գուլթն ու կարեկցանքը...կը բխին բնեութենէն մարդ անհատին եւ ցուցաբերուելու են բոլորին հանդէպ, անկախաբար անոնց մեզի հանդէպ ունեցած վերաբերմունքէն...անկախաբար զանոնք արժանի թէ ոչ-արժանի դատելու մեր հակումէն...Այլապէս այդ զուտ մարդկային ու բարոյական յատկանիշները պիտի դառնային պայմանաւոր, սակարկութեան ենթակայ...կորսնցնելով իրենց արժանիքը...եւ մեր վարուելակերպը պիտի դառնար ենթակայ ուրիշին վարուելակերպին եւ, հետեւաբար, ոչ-ազատ...Բարոյականութիւնը առեւտուր չէ...Անիկա անսակարկ է ...

.....

Առանց իտեալի կամ իտեալներու, մարդկային կեանքը պիտի ըլլար գետնամած գոյութիւն մը, քանզի այդ իտեալներն են՝ բարիի, գեղեցիկի, ճշմարիտի, անպայմանական, անշահախնդիր սիրոյ..., որոնք թեւ ու թռիչք կու տան հոգիին, կը դառնան կեանքի նպատակ ու իմաստ...Բայց ներկայ աշխարհի նիւթապաշտ, եսամոլ եւ շահամոլ դրուածքին մէջ, այդ իտեալները կը դառնան անհասանելի կապոյտ թռչուն, որուն մասին կարելի է միայն երագել եւ անով ներշնչուիլ...

.....

Ի՞նչ լաւ է որ սորվիլը տարիք չունի, այլ կախեալ է մարդ էակի աշխարհընկալումէն, իր բաց միտքէն, վարքագիծէն, հեզութենէն նաեւ, քանզի մարդ կայ որ կը կարծէ թէ ամէն ինչ գիտէ...թէ նոր բան սորվելու կարիք չունի...Իմաստաւորուած օրը, միևնույն, այն օրն է, երբ նոր գիտելիքներով, նոր իմացութեամբ կը հարստանանք, կ'իմաստանանք, կենսափորձի նոր շողով մը կը լուսաւորուինք...Այլապէս, գուցէ կեանքը կը կորսնցնէր իր հետաքրքրականութիւնը...որոշապէս:

.....

Ինչ տխուր է երբ մարդ էակը չկարենայ իր անհատականութիւնը արտայայտել՝ խօսքով, գիրով, հանրային ծառայութեամբ, մնայ անպտուղ, կծկուի ու մեռնի ինքն իր մէջ...Անհատականութիւնը կը ծաղկի, եթէ արտայայտութիւն գտնէ ան, եթէ արտադրէ, պտղաբերի եւ որքան տայ ան, այնքան աւելի կը շատնայ, կը ծաւալի, կը հարստանայ, ինքզինք կ'իրագործէ...Դժբախտութիւն է չտալը, դժբախտութիւն է, երբ մարդ էակը կը սմքի, կը ցամքի, կ'աղքատանայ հոգեպէս եւ կը մեռնի անհետ...

.....

Ձեւականութիւնն ու մակերեսայնութիւնը այնքան շատ տեղ գրաւած են մեր կեանքին մէջ, որ երբեմն մեքենականօրէն կ'ընենք բաներ՝ սովորութեան ոյժով միայն, կամ ալ ընկերային ընթացիկ ձեւականութեանց անձնատուր...Եթէ կարենայինք նորովի մտածել մեր առօրեայ վարք ու բարքին մասին, զատորոշելով էականը՝ ձեւականէն, կարելորդը՝ անկարելորդէն, գուցէ յայնժամ մեր կեանքը ստանար նոր որակ, մեր ճշմարիտ եութիւնը ցոլացնող՝ թութակաբար կրկնուող երեւոյթներէն ձերբազատ...

.....



Յուզամոլութեան վարակը...Եթէ կարենար հայ հանրութիւնը, ընդհանրապէս, Հայաստանի մէջ թէ Սփիւռքի, վարակագերծ ըլլալ այս ախտէն՝ ցուցամոլութենէն, յայնժամ մեզմէ իւրաքանչիւրը պիտի ներկայանար այնպէս, ինչպէս որ է, հայ հոգիի տոհմիկ պարզութեամբ...Յուզամոլութիւնը, ըստ իս, երեւնալու, ցոյց տալու փառամոլութիւն է, որ առաւել յատուկ է այն մարդկանց, որոնք իրենց հոգեմտաւոր-բարոյական աղքատութիւնը կ'ուզեն հատուցել՝ նիւթական «արժէքներով» երեւնալու մարմաջով...Թէեւ հանդիպած եմ երբեմն՝ հոգիով եւ միտքով հարուստ մարդկանց ալ, որոնք ամէն կերպով կը ձգտին ի ցոյց հանել իրենց կարողութիւնները, գուցէ յագեցում տալու համար՝ դարձեալ եւ դարձեալ իրենց Փառամոլութեան...Սա ալ թերեւս՝ ԵՍ-ի խորը թաքնուած, թերարժէքութեան զգացումի հատուցման կերպ է...

.....

Ճշմարտութեան ոսկեայ հատիկը պիտի փնտռել, որ քողարկուած կը մնայ՝ առօրեայ իրադարձութիւններու մշուշին տակ, հրապարակը ողողած խժալուր աղմուկին ու ժխորին ներքոյ, խաբէութեան հազար ու մէկ շերտերուն խորը...պիտի փնտռել ներքնատեսութեամբ, անեղծ ու մաքուր սրտովը մանկան, մտքով խուզարկու՝ որ կրցած է մնալ ազատ, կարծրատիպերէ եւ նախապաշարումներէ ձերբազատ...Պիտի փնտռել անխոնջ, անդուլ ու հանապազ, քանզի ճշմարտութիւնն է որ կրնայ Ինքնաճանաչման անփոխարինելի գանձը պարգեւել մեզի, Իմացութեան եւ իմաստութեան առաջնորդել մեզ, առանց որոնց դեռ երկար մենք կը դեգերինք պատմութեան քառուղիներուն վրայ՝ աննպատակ եւ ուղեմոլոր....

.....

Մարդ էակը թերեւս ամենէն մեծ առեղծուածն է... անչափ դժուար է մինչեւ վերջ հասկնալ, մինչեւ վերջ ըմբռնել զայն, մինչեւ վերջ վերծանել իր ըրածն ու չըրածը, իր ըսածն ու չըսածը...Խորախորհուրդ այնպիսի ծայքեր ու շերտեր կան անոր հոգւոյն խորը, որոնց մէջ թափանցելը եւ զայն ամբողջութեամբ յայտնաբերելը պիտի նմաներ ովկիանոսի խորքերը պեղելուն եւ անոր ընդերքը լրիւ բացայայտելուն...: Առեղծուածային ըլլալը չէ՞, սակայն, որ այնքա՛ն հետաքրքրական կ'ընծայէ զայն....

.....

Մեկնումներ կան, որոնք իրենց ուժգին հարուածով, մեզ կը սթափեցնեն, կը զգաստացնեն, կը ստիպեն նորովի մտածել կեանքի ու մահուան խորհուրդներուն մասին...եւ կը դառնան գիտակցութեան ոստում ժամանակի եւ տարածութեան հոսանուտին մէջ...

.....

Ոչ մէկ պատիւ ու պաշտօն աւելի բարձր կրնայ ըլլալ, քան ճշմարտութիւնը խօսելու եւ գրելու նպատակը սրբազան...Ոչ մէկ նիւթական թէ այլ վարձատրութիւն կրնայ համեմատուիլ՝ ազատ մտքին ու ազատ խօսքին հետ...Ոչ մէկ պարգեւ, դիրք կամ աթոռ կրնայ ըլլալ համարժէք՝ արթուն խիղճին եւ արդարութեան ձայնին հետ...Առաջինները խաբուսիկ են եւ զնայուն, երկրորդները՝ մնայուն եւ յաւերժական արժէքներ, որոնք կը սահմանեն կեանքի ճշմարիտ որակը....

.....



Տխուր պահերուս, լաւ բանաստեղծութիւնը սրտի բուժիչ բալասան է, որ կ'ամոքէ վերքն ու ցաւը, թեւեր կու տայ հոգիին՝ վեր բարձրանալու առօրեայի բազում-բազում խնդիրներէն, շնչելու մաքուր, անապական օդը՝ անեղծ ապրումներու, կեանքի բանաստեղծութեան, սիրոյ, բարութեան եւ ազնուութեան մթնոլորտին....Բոլոր արուեստներու մէջ, բանաստեղծութիւնն ու երաժշտութիւնն են որ կը գրաւեն հոգիս գերազանցօրէն, կը հմայեն, կը թեւաւորեն, կը ոգեշնչեն....Նման պահերուս, կը դիմեմ անոնց անդաւաճան, անկեղծ եւ սրտալիիր բարեկամութեան....

.....

Մենք մեր ձեռքով յաճախ կը սղոցենք ծառի այն ճիւղը, որուն վրայ նստած ենք....Այսպէս է որ մեր ձեռքով կը փակենք մեր վարժարանները, մեր զաւակները կ'ուղարկենք օտար դպրոցներ, աղքատ ազգականի տեղ կը յատկացնենք մեր մայրենիին....տակաւին կ'արտագաղթենք մեր սեփական հայրենիքէն, ինչ որ ալ ըլլան յարգելի եւ ոչ-յարգելի պատճառներն ու պատրուակները, կ'որդեգրենք օտարին կենցաղը, «արժեքները», խորթ բարքերը....իրարու միս կ'ուտենք յաճախ եղբայրատեաց տրամադրութեամբ...: Ի՞նչ անուն տալ այս ինքնառչնչացման ախտին, որ դար ու դարեր յօշոտեր է մեր հաւաքական մարմինը եւ դեռ կը շարունակէ աւեր գործել....

.....

Ուրիշին ապրած կեանքն ալ կրնայ ապրումի եւ կենսափորձի նոր շերտեր պարգեւել քեզի, կեանքի դասեր տալ, մտածելու եւ գործելու նոր հնարաւորութիւններ ընծեռել, աշխարհին նայելու նոր հորիզոններ բանալ հայեացքիդ դիմաց...Կեանքդ այսպէս կրնայ բազմապատկուիլ այլոց կեանքերու գումարով, մանաւանդ եթէ գիտես այլոց հետ զգալ, ապրիլ անոնց ցաւը, անոնց ուրախութիւնը, բաժնել անոնց կսկիծը, տազնապները....Այլպէս միայն անձնական կեանքով ապրիլը կը զգացում է, հոգեկան աղքատացում....

.....

Դարուս հիւանդութիւնը՝ «Ո՛ւր հաց, հո՛ն կաց», որ կը մեկնաբանուի՝ գնա՛ այնտեղ, ուր կա՛յ «լաւ», հանգիստ, բարօր կեանք...եւ կարելոր չէ որ այդ ճամբուն վրայ դուն զոհաբերես ամբողջ անցեալ մը, հարազատներ, նոյնիսկ՝ հայրենիք, արմատներ, ուր ինքնութիւնդ է, հոգիդ, համակ եւութիւնդ....Հարց կը տրուի՞ երբեւէ, թէ ինչո՞ւ կ'ապրի մարդս այս աշխարհիս երեսին....արդեօ՞ք միայն յարմարաւետ, նիւթապէս ապահովուած կեանք ապրելու համար....թէ՛ կան այլ արժեքներ, թէ կայ հոգի, հոգեւորը, զոր կարելի չէ անտեսել..., որուն պակասը անչափ անձկութեամբ, ներքին անբաւարարուածութեան զգացումով, ցաւատանջ ապրումներով կը համակէ սիրտդ, որքան ալ ապրիս նիւթապէս նոյնիսկ շքեղ կեանք, եթէ հեռացած ես հարազատ ինքնութենէդ....«Գաղթականը կէս մարդ է», պիտի ըսեր Կստան Չարեան, այնքան նշանակալից կերպով...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՔԱՌԵԱԿՆԵՐ ԿԱՄ ՔԱՌԱՏՈՂԵՐ



Չազար աշխարհի ալ ունենաս
Լոյսերով վառ, գեղատեսիլ
Ներաշխարհիդ դուն պիտ'ապրիս
Անով պիտի երջանկանաս...

.....
Երազն անհաս թող միշտ մնայ
Թէ որ հայիս քու մատներով
Գուցէ պղծես խորհուրդն անոր
Մնաս անոր փլատակին տակ....

.....
Նախ տունդ պիտ' կարգի դնես
Արդարութեան հիմքի վրայ
Թէ ոչ փունճ խօսք լոկ կը դառնայ
Արդարութեան քու պահանջդ...

.....
Բարի խօսքը բալասան է
Այրած սիրտին մխիթարանք
Յոյս ու լոյս է խաւարին մէջ
Կենաց դեղ է, ցաւի դարման...

.....
Մենք մեզի հետ ինչպէ՛ս վարուիլ
Ինչպէ՛ս խօսիլ, լեզու գտնել
Չտրվեցանք...դար ու դարեր



Մինչ օտարին դարձանք գերի....

.....

Ոսկի, արծաթ ու ադամանդ

Պէս-պէս գանձեր շքեղափայլ

Ինչպէ՞ս լեցնեն հոգին դատարկ

Յարստութիւն դառնան իրա՛ւ...

.....

Երկընտրանքին մէջ բարդագոյն

Բարեկամի՞ն թէ՞ ճշմարտին

Ընտրութիւնդ տուր ճշմարտին

Ան է սերը միշտ գերագոյն...

.....

Գաղջ մի ըլլար, գաղջն ոչինչ է

Ո՛չ տաք, ո՛չ պաղ, անորոշ է

Չգուշաւոր, վախկոտ մարդն է

Որ այդ վարքը դրսեւորէ...

.....

Յրաշք է կեանքը մեզի տրուած

Լոյսով պայծառ, խորհուրդով մեծ

Բայց դեռ հրաշքը մենք կ'որոնենք

Մինչեւ մեկնինք անվերադարձ...

.....

Անձրեւն անգամ յորդ, զովարար

Անբաղձալի հիւր կը դառնայ

Երբ կը տեղայ անժամանակ

Ամրան օդին գեղածիծաղ...

.....



Դաժան կեանք է, վերջը նոյնն է

Կ'անցնի, կ'երթայ արագընթաց

Բարի գործը կը շողշողայ

Լոյսի ճաճանչ խաւարին մէջ...

.....

Ամէն մէկ օր ծնունդ է նոր

Խոհ-ապրումներ ունի նոյն-նոր

Որոնք այցի պիտ' գան մեզի

Կեանքին պէս անգուշակելի...

.....

Ողջ տիեզերքն անպարագիծ

Կ'ապրի սիրտիս մէջ իմ փոքրիկ

Եթէ իջնեմ խորքերն անոր

ՉԱստուած գտնեմ լուսագորով...

.....

Ինչպէ՞ս յարգանք դուն կը սպասես

Երբ զայն զլանաս ուրիշներէն

Պիտի յարգես որ յարգուիս

Չկայ յարգանք միակողմանի...

.....

Խորիտրատներն ի վար հոգւոյն

Ես միշտ ծաղկին հանդիպեցայ

Լոյսի թերթեր ուներ շողուն

Այդ շողով միշտ ես արբեցայ...

.....

Վերքն է որ ծնի երգ հոգեթով

Ցաւի ակերէն կը բխի սիրով

Դեղ ու դարման դառնայ ամոքիչ



Այլոց նաեւ՝ բալասան բուժիչ....

.....

Յոգին մարդուն կը վերթելէ

Կապանքներէն բիւր ձերբազատ

Կ'ուզէ ճախրել անհունին մէջ

Տիեզերքն է իր բնակարան...

.....

Կեանքի երկար ճամբուս վրայ

Մարգարիտներ ես շատ տեսայ

Բայց մարգարիտն իրական

Յոգւոյս մէջ էր խոր թաքնուած...

.....

Երբ թանձրանայ մութն գիշերուան

Աստղեր կ'ելլեն որպէս ջահեր

Բիւր-բիւր խոհեր այցի կու գան

Որպէս մտքի ճառագայթներ...

.....

Վեհութիւն կայ տրտմութեան մէջ

Չերթ լոյսի շող ամպի ետին

Չգաստացման հրաւեր որպէս

Կը մօտեցնէ սիրտը սիրտին...

.....

Ո՞վ կրնայ կարդալ սիրտը մարդուն

Թէ ինչեր կան գրուած այնտեղ

Սեր-կարօտներ, վառ ապրումներ

Մակերեսին լոկ մնան ծփուն...

.....

Թէկուզ չնչին բաներու մէջ



Ուրախութիւն պիտի գտնես

Անոնք յետոյ կը բազմանան

Աշխարհ մ'համակ լեցնելու չափ....